

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՏԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՆԿԱՇԿԱՆԴ ՄԻՏՔ

Ամերիկեան Պորտի պաշտօնական թերթին փետրուարի թիւին մէջ ընդհանուր վիճակացոյց մը կը գտնենք աշխարհի գանազան կողմերը իրենց գործունէութեան ցայտօր ձեռք բերած արդիւնքներուն մասին: Մենք ընդհանրապէս Պորտի ընկերութիւնը կը ճանչնանք իրենց թիւրքիոյ մէջ կատարած գործէն, բայց աւելորդ է ըսել թէ իրենց աշխատութիւնը աշխարհի գրեթէ ամէն կէտերուն վրայ սփռուած է, հոն ուր մանաւանդ ըրիստոնէական քաղաքակրթութեան բարիքները սփռուելու պէտքը ամէնէն աւելի փափաքելի երեցած է ամերիկեան բարեսիրութեան: Այսպէս, Պորտը իրեն գործունէութեան ասպարէզ բրած է Արեւմտեան եւ Արեւելեան կեդրոնական Ափրիկէ, Զուլուտան, Հնդկաստան ու Սէյլան, Չինաստան, Ճաբոն, Հաւայեան կղզիները, Միքսիկոյի եւ այլն:

Մեզի համար էն շահեկանն է անշուշտ գիտնալ այն արդիւնքները զորոնք Պորտը ձեռք բերած է իր թիւրքիոյ երեք մեծ կայքերուն մէջ, — Արեւմտեան թիւրքիա (Խուսիս) հաստատուած 1819ին, Սրբեւելեան թիւրքիա (Խարբըր) հաստատուած 1836ին, և կեդրոնական թիւրքիա (Կիլիկիա ու Փոքր-Հայք) հաստատուած 1847ին:

Վիճակացոյցը կ'ընդգրկէ 1898-99ի տարեշրջանը ու երեք մասի կը բաժնուի, — միսիոնարներու եւ տեղացի օգնականներու թիւը, կրօնական վիճակագրութիւն, և կրթական վիճակագրութիւն, որ մեզի համար ամէնէն կարեւորն է եւ կը բաղկանայ հետեւեալ թուանշաններէն:

Կրթութիւն ստացող մանչերու ու աղջիկներու համազումը թիւը	
Արեւմտեան թիւրքիա	7,666
Արեւելեան թիւրքիա	7,577
Կեդրոնական թիւրքիա	7,109
	<b>22,352</b>

Ասիկա պատկանելի թիւանշան մըն է որուն առջեւ կ'արժէ կանգ տանել: Այդ 22,000 տղաքը, որոնց ամենաստուար մեծամասնութիւնը Հայ, կը կրթուին 3 աստ-

ուածարանական վարձարանի, 43 գիշերօթիկ և բարձրագոյն վարձարանի ու 457 երկսեռ նախակրթարանի մէջ, — ու անհաշուելի է անշուշտ օչուտը զոր այդ հաստատութիւնները կ'ընձևեն Վեր ցեղին զարդացման ու լուսաւորութեան գործին:

Վիճակացոյցին միւս երկու զուգններուն համեմատ, բողոքականութեան յարած անձերուն թիւն է, այդ երեք կայքերուն մէջ, 47,386 հոգի: Բայց, ինչպէս յայտնի է, Պորտը իր այս վիճակագրութեան մէջ կ'ընդգրկէ ոչ միայն Հայերը, այլ և Յոյները եւ ուրիշ ըրիստոնէաներ որոնք իր քաղաքացիութեանց կը յարին, այնպէս որ կարելի չէ ճշգրտել Հայերուն թիւը այդ վիճակագրութեան մէջ:

— Այդ կրօնական ու կրթական գործը կը կատարուի 62 միսիոնարի և 850 տեղացի օգնականի ձեռքով, որոնց 587ը ուսուցիչ:

Ամերիկեան Պորտին մեր երկրին մէջ կատարած գործին մէկ նոր երեւոյթին վրայ ուրիշ ծանօթութիւններ կը գտնենք — թէ եւ սքօզեալ ձեւի մը տակ — յիշեալ թիւին խմբադրական սիւնակներուն մէջ:

«Թիւրքիոյ մէջ կատարուած աշխատութեան ամէնէն յուսալիւր յատկանիշներէն մին է հիմա — կ'ըսէ խմբագրութիւնը — սա թէ Լուսաւորչական հին Եկեղեցին կ'ընդունի այն ուսուցիչները որոնք մեր միսիոնարներուն խնամատարութեան ներքեւ գտնուող վարձարաններուն մէջ կրթուած են: Մեծապէս ուրախալի է իմանալ թէ շատեր այն որք պատանիներէն որոնք, ջարդերուն թուականէն ի վեր, որբանոցներու մէջ խնամուած են, ուսուցիչ եղած են: Մեր միսիոնարներէն մին կը տեղեկագրէ թէ իր շրջանակին հետ կապ ունեցող տասնմէկ զիւղական վարձարան այդ պատանիներուն խնամատարութեան ներքեւ են: Պատանիները լիովին ընդլրկած են աւետարանական գաղափարները, և անոնցմէ շատը կը կ'սրժուի թէ ճշմարտապէս դարձած են, և սակայն տակաւին կապուած են Լուսաւորչական Եկեղեցիին և իբր ուսուցիչ կ'ընդունուին անոր վարձարաններուն մէջ: Մեզի կ'ըսեն թէ Լուսաւորչականներուն գործակցութիւնը այդ շարժումին մեծապէս քաջալերական է: Ասիկա կը խոստ...

նայ ըլլալ շատ ազդեցիկ քայլ մը դեպի այն նպատակակէտը զոր Ամերիկեան Պորտին միսիոնարները միշտ աչքի առաջ ունեցած են, — այսինքն Հայ Եկեղեցիին բարեկարգումը՝ նոյն իսկ այդ եկեղեցիին մէջէն յաճնող աւետարանական ոյժի մը միջոցաւ: Առ այժմ նպատակաշարժար չէ հրատարակել բոլոր այն իրողութիւնները որոնք այդ շարժման հետ կապ ունին եւ որոնք մեծ խրախոյս կը ներշնչեն հիմա մեր միսիոնարներուն:»

Մեր հայրենի երկրին մէջ ամերիկացի միսիոնարներուն կատարած քաղաքակրթիչ դերին վրայ քանի քանի անգամ այս սիւնակներուն մէջ խօսած եմ արդէն անվերապահ ջատագովութեամբ, միշտ սակայն ուշադրութիւն դարձնելով միայն ու միայն անոնց կրթական գործին: Ամերիկեան Պորտին կատարած կրօնական գերին վրայ այս անգամ ալ պիտի չխօսեի եթէ չըլլար Պատ. Տուայթի մէկ յայտնութիւնը նոյն թիւին մէջ:

Անշուշտ ոչ մէկուն համար դաղտնիք մըն է հաւատարածութեան դիտումը որ կայ ամերիկեան միսիոնարներուն ձեռնարկութեան մէջ. բայց մենք հաւատարիք ունինք, իրենց իսկ բերնէն, թէ ատիկա ուղղուած չէ զարբերու նուիրագործումովը գեղեցկացած պատմական ու ազգային եկեղեցիի մը հիմքերը խախտելու՝ ու քանդելու զայն, հապա աշխատելու զայն աւելի պատշաճեցնելու ներկայ պահանջներուն և անոր մէջ աւելի ընդարձակ տեղ մը ու աւելի ազդեցիկ պաշտօն տալու քրիստոնեութեան հիմը կազմող սկզբունքներուն — Աւետարանին — ուսումնասիրութեանը:

Աներկբայ, շատեր պիտի փափաքէին որ միսիոնարներուն ձեռնարկը ո եւ է գործ չունենար Հայ Եկեղեցիին հետ: Բայց, վերջապէս, օտարներէ՝ որոնց բարեբը կը վայելենք՝ չենք կրնար պահանջել իրենց տեսութիւնը պատշաճեցնել մերիններուն, կամ իրենց իտէպը փոխել մեր յարմարութեանցը համաձայն: Ու յետոյ, Հայ Եկեղեցիին բարեկարգման հարցին իրենք չեն որ ամէնէն աւելի ուժգնութեամբ ու խանդով կը հետամտին: Ահա տարիներէ ի վեր, հայ մամուլին ամէնէն զարգացած մասը կը պահանջէ Հայ Եկեղեցիին ամուսնական օրէնքներուն ամբողջական բարեփոխութիւնը, և կուսակրօն քահանայութեան պէս հիմնական կանոնի մը բարձումը՝ հիմա Կ. Պոլսոյ հայ մամուլին մէկ մասէն կը ջատագովուի մեծ եռանդով, եւ ոչ զոք կը խրտչեցնէ:

Ինչ որ ինձի աւելի ուշագրաւ կը թուի, մտքի այն վիճակն է զոր կը կարծեմ գտնել ամերիկացի միսիոնարներուն քով և զոր փափաքելի պիտի չըլլար դրոշմուած տեսնել իրենց հոգածութեան ներքեւ գտնուող հայ սերունդներուն:

Պատ. Տուայթ, ինչպէս ըսի, յօգուած մը ունի Պորտի պաշտօնական թերթին նոյն թիւին մէջ, ուր կը յիշէ Ռըվիտ տէ Տիօ Մոնտի քաղաքատեղիները Թիւրքիա գործող բողոքական ու կաթոլիկ միսիոնարներուն միջեւ, — քաղաքատեղիին բոլորովին կաթոլիկներուն նպաստաւոր, աւելորդ է ըսել, ֆրանսացի դրողին կողմէ որ բոլոր այդ

կրօնաւորները կը նկատէ իբր ֆրանսական ազդեցութեան հիմնաքարերը Արեւելքի մէջ, անոնց վերագրելով ամէն առաքինութիւն եւ բարոյական ամէն յատկութիւն: Պատ. Տուայթ հարկ չի տեսներ, նոր քաղաքատեղիներ մը, նժարը այս անգամ իրենց կողմը հակեցնելու, բայց իր անուղղակի պատասխանին մէջ սա տարօրինակ տողերը կը գտնեմ որոնց առջեւ կանգ կ'առնեմ զարմացած.

«Այդ կաթոլիկ միսիոնարութիւնները գլխաւորապէս ֆրանսայէն պաշտօնական աշակցութիւն կը գտնեն, որովհետեւ ֆրանսերէն լեզուն կը սորվեցնեն և ֆրանսական զարգացումը կը ջատագովեն: Բայց անգամ մը որ իրենց աշակերտները ֆրանսերէն կը սորվին, ոչ թէ այդ կրօնաւորներուն բերած անմեղուկ թափօն զրբերը կը կարդան, հապա Վոլդէն, Ռուսօ, Վիգորո Հիւօ, Չոլսո:»

Եթէ իրացնէ Պատ. Տուայթ Թիւրքիոյ մէջ հետզհետէ հասնող սերունդներուն համար աղէտք մը կը նկատէ իրենց ախորժը Վիգորո Հիւօ կարգալու, ասիկա մտածելու այնպիսի եղանակ մըն է որ մենք, մեր կարգին, ճշմարտապէս աղիտաբեր կը նկատենք զայն իրեն համամիտ միսիոնարներուն յանձնուած սերունդներուն համար:

Կը հասկնամ որ յարգամեծար պատուելին, անգլեւսաքսոն ամօթխածութեամբ մը, Չոլսոն իր բոլոր ուժովը մերժէ վտարէ իրեն յանձնուած աշակերտներուն հասողութենէն, ու նոյն իսկ էտպէս կաթոլիկ սարսափ մը պահէ դեռ Վոլդէնէն: Բայց Ռուսօն, ու մանաւանդ Վիգորո Հիւօն, — Թշուառներուն Հիւօն մասնաւորապէս որ ամբողջին սրտին կ'երթայ և բարոյական հացի մը պէս է անոր համար:

Բողոքականներուն գործունէութիւնը մեր մէջ կը նախընտրեմ կաթոլիկ կրօնաւորներուն գործունէութենէն, ճշդիւ անոր համար որ կը հոււատամ թէ առաջինը աւելի ազատ կը թողու աշակերտին մէջ իր անհատականութիւնը, նուազ ջանահնար կ'ըլլայ պրկելու, կաշկանդելու անոր միտքը՝ և յարմարեցնելու ճշող կաղապարի մը որ պիտի խեղդէ թոփշները և թափերը որոշ ու անխախտելի պայմանադրութեանց մէջ: Բայց Պատ. Տուայթ ահա երևան կը բերէ մեզի իր ներքին մտածումը մտքի ազատութեան մասին, եւ ատիկա շատ տարբեր չեմ գտներ ես կաթոլիկ միսիոնարի մը մտածելու եղանակէն որ, ան, գոնէ, երբեք չի ներկայանար իբր պաշտպան մը ազատ քննութեան և անկաշկանդ մտածման:

Կը մտածեմ սակայն հիմա թէ տեղի չկայ շատ տաղանապելու այն փեսաներուն համար զոր մեր սերունդները կրնան կրել այդքան կանխակալ ու միակողմանի ուղղութենէ մը: Հայ ուղեղը այնպէս շինուած է որ ըմբոստ է ո և է կաղապարի որ կրնայ ճշմել իր ազատ գործունէութիւնը, և իրեն տրուած կրթութիւնը՝ ո՛ր կողմէն որ ալ գայ՝ երբեք չի կրնար անոր մէջ մարել ընդարձակ հետաքրքրութիւններու և լայն ըմբռնութեան ախորժը:

Վ Ր Է Ժ Ը

(Շարունակություն)

Ե.

Գարեգին մինչև իրիկուն յուզեալ օր մը անցուց։ Ավրամի յանկարծական մեկնումը չէր կրնար զլսուն մէջ սեղմեցնել, ու բանի կը մտածէր ատոր վրայ՝ այնչափ կատաղութիւնը կը բորբոքէր։

— Պիտի փախի՛, ազատի՛ պատիժին ձեռքէն, կը մրմոար ինքնիրեն, ա՛խ ճար մը գտնայի սա մարդուն ճամբորդութիւնը յետաձգելու համար։

Քայլերը ուղղեց դէպի փաշա Լիման, Արշակին տունը, խորհելով որ թերևս անիկա կրնար գաղափար մը յղանալ իր ջուրը ինկած ծրագիրը վերականգնելու համար։ Սակայն քաշելով հանդերձ, շատ յոյս չունէր իր բարեկամին խորամանկութեան վրայ։

— Ան ալ պարապ տղուն մէկն է, կը մտածէր, փոխանակ ինծի հետ մէկ ըլլալու, զիս քաշալերելու, ընդհակառակը առաջին օրէն ամէն ջանքը ըրաւ իս վհատեցնելու համար։ Միայն երէկ իրիկուն քիչ մը փոխուած էր... ինչ որ է, մէջ մը երթամ զինքը տեսնեմ։

Արշակ տունը չէր և տանտիրուհին ըսաւ որ առտուն կանուխ Աթէնք գացեր էր ու գիշերը ուշ ատեն պիտի վերադառնար։

Արշակին այս զիպուածական բացակայութիւնը բաւական եղաւ Գարեգինի արդէն զրգուած ջիղերը ա՛լ աւելի թունդ հանելու։

— Ի՞նչ կ'ընէ... ինչո՞ւ Աթէնք կ'երթայ, ինչո՞ւ տեղը չի նստիր, կ'ըսէր ինքզինքը ուտելով։

Նոյն իրիկունը բերանը պատած մը բան չկրցաւ զընել, և հազիւ ժամը ինը կար՝ տուն գնաց անկողնին վրայ ինկաւ։ Ժամերով շրջեր էր փողոցէ փողոց ու ա՛լ կարողութիւնը չէր մնացեր վրան ոտքի կենալու։ Անկողնին մէջ սակայն նորէն Ավրամի մեկնումը եկաւ խոռովել իր հանգիստը։

— Այդ Ալեքսանդրիային եկած հեռագրին պատմութիւնը տարօրինակ է քիչ մը, սկսաւ մտածել։ Ավրամ հազիւ երեք օր է որ եկած է և զեռ ժամանակ չունեցաւ Ալեքսանդրիա նամակ գրելու եւ իր պանդոկին հասցէն տալու, հետևաբար ի՞նչպէս կ'ըլլայ որ հեռագիր կուգայ իրեն։ Ի՞նչպէս այս կէտը անմիջապէս միտքս չեկաւ երբ հեռագրին խօսքը ըրաւ... Այո՛, յայտնի կ'երևայ որ անպիտան Հրեան իս խաբեց իր պատմութեամբը... բայց ինչո՞ւ համար։ Արդեօք մեկնումն ալ սուտ է... արդեօք ինչ կը կասկածի՛ կոր, ականջին բա՛ն մը հասաւ։ Բայց ո՞վ կրնար իմ խորհուրդներուս վրայ տեղեկութիւն ունենալ. միայն Արշակին բացուած եմ, եւ անկարելի է որ Արշակ իմաց տուած ըլլայ, քանի որ, կերպով մը, իմ

մեղսակիցս է այս գործին մէջ. ասիկ զատ ինչո՞ւ այդ տեսակ բան մը պիտի ընէ...

Ու Գարեգին որ եւ է՛կերպով չէր կրնար մեկնութիւն մը տալ իր միտքը յուզող խնդիրներուն. միայն սա՛ կէտին համոզուեցաւ թէ Ավրամ զինքը բացարձակապէս խաբած էր հեռագրին պատմութեամբը։

— Վաղը ցորեկ պիտի տեսնամ զինքը, ամէն ջանք պիտի ընեմ բերնէն կորզելու այդ սուտին պատճառը...

Հետեւեալ առտուն կանուխ ելաւ անկողնէն, հազուեցաւ ու զուրս նետեց ինքզինքը։

— Նախ պէտք է հասկնամ որ իրաւցնէ այսօր կը մեկնի կոր Ավրամը, ըսաւ։

Շիտակ Բարթէնոնի պանդոկը գնաց եւ տեղեկութիւն հարցուց։

Կասկած չի կար։ Ավրամ պիտի երթար նոյն օրը, սնտուկները զրկած էր արդէն ու տոմսակը առած։ Նոյն իսկ առտուն կանուխ ծառային ապսպրած էր որ կառք մը վարձէ, որպէս զի ցերեկին զինքը քարափ փոխադրէ։

— Կա՞ռք մը պանդոկէն քարափ երթալու համար. բայց երկու քայլ է ասիկ հոն, գոչեց Գարեգին, երբ պանդոկին ծառան այդ մանրամասնութիւնը հաղորդեց իրեն։

— Չեմ գիտեր, պատասխանեց ծառան, ինծի այդպէս ըսաւ, կ'երևայ որ անհանգիստ է ու ատոր համար չ'ուզեր կար ոտքով երթալ։

Գարեգին ա՛լ բորբոքովին յուսահատած մեկնեցաւ պանդոկէն։

— Հեռագրին պատմութիւնը սուտ է թէև, բայց ափսոս որ մեկնումը ճշմարիտ է, մտածեց։

Ժամը հազիւ ութը կար և Ավրամին դալէ առաջ չորս ժամ ունէր սպասելիք։ Որոշեց երթալ Արշակին։

Երբ սենեակէն ներս մտաւ, իր խոսքեղցի բարեկամը, թէև արթուն, զեռ անկողինն էր։

— Բարե՛ւ, գոչեց Գարեգինը տեսնելով, երէկ իրիկուն եկեր իս փնտոներ ես, հիմա ալ ասանկ կանուխ... խե՛ր է։

— Ի՞նչ ընելու գացիր երէկ Աթէնք... մինչև գիշեր, հարցուց բարկութեամբ Գարեգին որ մէկը կը փնտոէր հետը կոռուելու համար։

Արշակ սկսաւ խնդալ։

— Գործ, գործ, գոչեց, վերջապէս կը սկսիմ կոր յաջողութիւն գտնալ... այսօր նորէն պիտի երթամ եւ զուցէ նորէն զիշերը գառնամ... եթէ ասանկ երթայ հոստեղի սենեակս պիտի ձգեմ եւ Աթէնք պիտի փոխադրուիմ։

Արշակին պատմութիւնը ճշմարիտ էր։ Աթէնքի յոյն գահարազածաններն մէկը լուր զրկած ու կանչած էր զինքը ու շատ մը գործեր յանձնած. նոյնիսկ կարեւոր կանխավճար մըն ալ ըրած էր հայ երիտասարդին, որ զրպանը պարարտ զարձած էր Բիրէ։

Գործի այդ անակնկալ յաջողութիւնը զոր Արշակ իր երազանքներուն իրականացման մէկ ստոյգ նշանը կը համարէր, զինքը ամենազուարթ տրամադրութեան մը մէջ զրած էր, որ բոլորովին հակապատկերն էր իր Սամա-

թիացի բարեկամին վիճակին: Նոյն իսկ Արշակ իր այս շէն շող վայրկենին չկրցաւ նշմարել Գարեգինին ցասկոտ կերպարանքը և սիկարէթ մը հրամցնելով ըսաւ.

— Գուն ալ ուրախ կ'երեւաս կոր, ի՞նչ կայ նայինք, առտուն կանուխ աղէկ լուր մըն ալ դո՛ւն տուր...

— Ուրախ կ'երեւամ կոր, գոչեց Գարեգին, ուրախ կ'երեւամ կոր... քիթիս կը խնդաս կոր, թէ խելքդ թըռուցեր ես:

Ու Գարեգին ոտք ելլելով սկսաւ սենեակին մէջ վեր վար քալել:

Արշակ մէկէն տեսաւ որ սխալ մը ըրած էր և ուղղելու համար զայն, իսկոյն լուրջ, գրեթէ հանդիսական կերպարանք մը առաւ և հարցուց.

— Ի՞նչ կայ որ... զէջ բան մը պատահեցաւ:

Գարեգին առանց պատասխանելու կը շարունակէր սենեակին մէջ շրջիլ:

— Ի՞նչ կայ, ըսէ՛ շուտ, գոչեց նորէն Արշակ, բոլորովին զոգ ելած, Պոլսէն լուր մը առիր...

— Այլրամ այսօր կը մեկնի կոր, ահա՛ եղածը...

Խասոզեղցին մեծկակ շունչ մը առաւ:

— Հա՛, ա՛տ է բոլոր բարկութեանդ պատճառը:

Բայց տեսնելով որ Հրեային մեկնելուն մասին ուրախութիւն կամ անտարբերութիւն ցոյց տալով աւելի պիտի բորբոքէր իր պատանի բարեկամը, ինքզինքը ժողովեց և հարցուց.

— Իրա՛ւ կ'ըսես թէ կատակ կ'ընես կոր, պատմէ՛ նայինք մանրամասնօրէն... կտրելի է ճար մը կը զբտնանք միասին:

Գարեգին նստաւ և մէկիկ մէկիկ հաղորդեց իր բարեկամին մեր գիտցած զէպքերը: Երբ խօսքը աւարտեց Արշակ յուսահատ զէմք մը առաւ և պատասխանեց.

— Կը տեսնամ որ ճար չի կայ... անպիտանը պիտի պրծի ձեռքերնուս, ի՞նչ ընենք, պէտք է համակերպիլ...

Ու անկողնէն ելլելով սկսաւ հագուել:

— Ժամը տասնըմէկին Աթէնք պէտք է ըլլամ, դուն ալ եթէ կ'ուզես հետս եկուր:

— Չէ, կէսօրին Այլրամին հետ ժամադրութիւն ունինք, մէկտեղ շողենաւ պիտի երթանք:

— Չզէ՛ սա շունը... ա՛լ ի՞նչ հետը կը տեսնուիս կոր, քանի որ միտքդ զբաժող պիտի չկրնաս գործադրել:

— Անպատճառ կ'ուզեմ վերջին անգամ մը տեսնալ զինքը և սա՛ հետզհետէ ինչիւր լուսաբանել... չեմ կրնար կոր ըմբռնել թէ ինչո՛ւ խաբեց զիս:

Երկու բարեկամները միասին դուրս ելան ու զէպի Բիրէ ուղղուեցան:

— Եկո՛ւր Աթէնք երթանք, պնդեց նորէն Արշակ որ կ'ուզէր անպատճառ իր բարեկամը հեռու պահել Այլրամէն՝ վախնալով որ իր զրգուած վիճակին մէջ վերջին րոպէին անխոհեմութիւն մը կ'ընէ:

Գարեգին հասկցաւ Արշակի գիտաւորութիւնը և ըսաւ.

— Մի՛ վախնար, խենթ չեմ որ այդ աղտոտ շանը համար ինքզինքս վտանգեմ. եթէ այդ տեսակ գիտաւոր-

ութիւն մը ունենայի, երէկ, իր սենեակին մէջ, միս միսակ եղած ատեննիս կ'ընէի: Չէ՛, պարզապէս հետաքրքրութիւն մը յագեցնելու համար է որ կ'ուզեմ անգամ մըն ալ տեսնալ զինքը: Ինչո՛ւ համար այդ հեռագրին սուտը հնարեց, ինչո՛ւ համար մէկէն ի մէկ կը մեկնի կոր, ասիկա կ'ուզեմ հասկնալ:

Կայարանին մօտ հասած էին եւ ժամը տասնուկէսն էր:

— Կ'ուզես այդ գաղտնիքին լուծումը գիտնալ առանց Այլրամը հարցուփորձելու, ըսաւ Արշակ վստահ ձայնով մը, լա՛ւ, ես քեզի կը բացատրեմ, միայն թէ խօսք տուր որ ինձի հետ մէկտեղ Աթէնք գաս ու ա՛լ այդ Հրեային երեսը չտեսնաս...

— Գո՛ւն... ի՞նչպէս կրնաս գիտնալ:

— Կուզո՞ս կոր միասին, վակոնին մէջ կը բացատրեմ:

— Օ՛Ֆ, կատակի բնաւ սիրտ չունիմ, գոչեց Գարեգին որ սակայն կը սկսէր կասկածիլ թէ իր բարեկամին լեզուին տակ բան մը կար:

— Կ'երզնում որ պիտի ըսեմ քեզի Այլրամին յանկարծական մեկնումին պատճառը...

Պատանին Արշակին երեսը նայեցաւ տարօրինակ նայուածքով մը.

— Գուն բան մը խառնեցի՛ր ուրեմն, գոչեց բարկութեամբ, բայց անմիջապէս մտածելով որ այդ ձեւով չէր կրնար խօսեցնել տար իր բարեկամը, ձայնը մեղմացուց և շարունակեց.

— Ի՞նչ կ'ուզէ ըլլայ արդէն, բանը բանէն ա՛լ անցած է, շատ աղէկ, երկու տոմսակ ա՛ն ու միասին երթանք...

— Կեցցես՛, տեսա՛ր, հիմակ խելքդ զուլից եկաւ, պատասխանեց Արշակ ուրախութեամբ:

Քանի մը վայրկեան հոքը կառախումբը ճամբայ կ'ելլէր: Գարեգին բոլորովին հանդարտութիւն կեղծելով, նոյնիսկ չէր հարցուփորձեր Արշակը և կը սպասէր որ ա՛ն առաջին անգամ խօսք բանայ: Երբ Փալէրոյէն անցան, խասոզեղցին լուութիւնը խզեց.

— Է՛յ, չե՞ս հարցնել թէ ինչո՛ւ Այլրամ ասանկ մէկէն ի մէկ կ'երթայ կոր:

— Ինչո՛ւ, ըրաւ Գարեգին անտարբեր կերպարանքով մը:

— Խօսք կուտա՛ս որ չբարկանաս ըսելիքներուս:

— Այո՛:

— Լա՛ւ ուրեմն, ես նամակով մը իմաց տուի իրեն թէ Հայերը զինքը պիտի մեղցնեն ու պէտք է որ անմիջապէս ձգէ փախչի...

Պատանին աչքերը վառեցան, բայց մէկէն ինքզինքը զսպեց և բնական ձայնով մը պատասխանեց.

— Շիտակը, քիչ մը կասկածեցայ քե՛նէ... ինչո՛ւ ըրիր:

— Եղբայր, նախազգացում մը ունէի միշտ որ այդ բանը պիտի չյաջողէր ու զլխուզ, և գուցէ երկուքնուս ալ զլխուն, մեծ փորձանք պիտի բանար: Ասկէ գատ, ի՞նչ կ'ուզես ըսէ, վերջապէս ոճրագործութիւն է ատիկա... թող Աստուծակէ գտնայ իր պատիժը... ո՛վ զիտէ, թերեւ Եգիպտոս գացած ատենը շողենալը կ'ընկղմի ու

ծովուն մէջ կը խեղդուի...

— Ինչ որ է, թէեւ քու կարծիքէդ չեմ, բայց պարապ տեղը ա՛յ չլիճաբանինք: Սա քու գործերդ պատմէ նա, ինք... Ինծի ալ այդ գոհարարածառոյց քով գործ մը չե՞ս կրնար ճարել:

Արշակ շատ զարմացաւ իր պատանի բարեկամին անտարբերութեան վրայ: Կը սպասէր որ Գարեգին բորբոքած՝ իրեն հետ կտիւ մը պիտի ընէր, անոր այդ հանդարտութենէն հետեւցուց որ Գարեգին ալ ներքնապէս գոհ մնացած էր իր ըրածէն: « Ինք ալ հաւկցաւ անշուշտ իր ընելիք գործին ծանր քաւտանգաւոր հետեւանքները եւ հիմակ գոհ է որ իր պատիւովը մէջէն ելաւ, » կը մտածէր:

Մինչեւ Աթէնք երկու բարեկամները ա՛յ չխօսեցան Ալրամին վրայ:

Օժտնիայի կայարանին դուրսը Արշակ բամբուկացաւ գոհարարածառոյն երթալու համար և Գարեգինի հետ մասաղիբ եղան Բլաթիա թէոտորա, ցորեկուան ճաշը միասին ընելու:

Հազիւ թէ Արշակ աներևոյթ եղաւ, Գարեգին մտաւ կայարան, տոմսակ մը առաւ եւ վազելով ինքզինքը նետեց Բիրէ գացող կառախմբին մէջ:

— Ժամը տասնը մէկն է, ըսաւ ինքնիրեն, կէս ժամէն Ալրամին պանդոկն եմ և այս անգամ Արշակ ձեռքս չի կրնար ազատել դայն... :

2.

Ժամը տասներկուքին քառորդ կար երբ Գարեգին հասաւ Բարթէնոնի պանդոկը և առանց նախապէս իմաց տալու զիմեց Ալրամի սենեակը: Դուռը կղզուած էր: Աժուլ և ետեւէ ետեւ զարկաւ:

— Ո՞վ է, լուսեցաւ ներսէն Հրեային ձայնը:

— Ես, Խրիսթոն, գոչեց Գարեգին, շո՛ւտ բաց:

Ալրամ եկաւ դուռը բանալու: Պատանին յուզուած կերպարանքով մը.

— Բարեւ, Ալրամ էֆէնտի, ըսաւ, վախցայ որ դուրս ելած կ'ըլլաք և ձեզ հոս չեմ գտներ:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ այդպէս իրար անցեր ես, հարցուց Հրեան շուարած՝ իր բարեկամին:

Գարեգին միշտ շփոթ ու յուզեալ դէմքով մը գոչեց.

— Շո՛ւտ պէտք է որ ձգէք երթաք այստեղէն... իմացայ որ Հայերը ձեզ պիտի գարնեն եղեր:

— Ո՞րիկ իմացար:

— Սրճարանը նստած էի, երեք Հայ կը խօսակցէին կոր... մէջերէն մէկը կ'երեւայ որ կեսարացի էր ու հայերէն լաւ չէր գիտեր ու թիւրքերէն կը պատասխանէր կոր իր ընկերներուն... Իստատեղացի յոյն ենթադրեցին անշուշտ և առանց կասկածելու խօսքերնին առաջ տարին:

— Է՛յ, ի՞նչ իմացար...

— Այսօր Խըտիլիի շոգենաւով երթալիք ըլլալդ զիտէին կոր և կ'երեւայ որ պատրաստութիւն տեսեր են քեզ կամ շոգենաւին մէջ, կամ Ալիքսանդրիա հասնելուդ պէս

սպաննելու:

Ալրամին գոյնը բոլորովին նետեց:

— Մե՞ղք որ հայերէն չգիտնալուս կարող չեղայ մանրամասնաբար ամէն բան իմանալ, շարունակեց Գարեգին, միայն թէ ասիկա շատ աղէկ հասկցայ որ երկու հողի յատկապէս նոյն շոգենաւով քեզի հետ պիտի գան... :

— Ի՞նչպէս մարդիկ էին այդ երեք հողին, հարցուց Ալրամ:

— Տաճկերէն խօսողը քառասուն տարեկան մէկը կ'երեւար կոր, աւագակի զէմքով, խոշոր, թուխ մարդ մը, իսկ միւսները աւելի երիտասարդ էին: Երիտասարդներէն մին, որ գիտէի ու կարմիր երեսներով մէկն էր, Արշակ կը կոչուէր... միւսներուն անունը չկրցայ իմանալ:

— Արշակ... :

— Այո՛, շատ աղէկ լսեցի որ քանի մը անգամ Արշակ ըսելով հետը խօսեցան:

Պահ մը լուսթիւն տիրեց. յետոյ Գարեգին խօսքը շարունակելով.

— Բայց, Ալրամ էֆէնտի, աս Հայերը ի՞նչ կ'ուզեն ձենէ, ի՞նչ թշնամութիւն ունին ձեզի դէմ...

Հրեան չպատասխանեց և սկսաւ ժուռ գալ սենեակին մէջ:

— Ես արդէն իմացեր էի Հայերուն ընելիքը, ըսաւ յանկարծ, ա՛ն կարդա սա նամակը:

Եւ գրպանէն հանեց Արշակին գրած նամակը:

— Թիւրքերէն կարդալ չեմ գիտեր, պատասխանեց Գարեգին, զուք կարդացէք:

Երբ Ալրամ նամակին ընթերցումը աւարտեց, Գարեգին գոչեց.

— Նամակին մէջը յիշուած Արշակը ըլլալու է սրճարանը տեսած երիտասարդս... Ինչ որ է, հիմա ձգենք ատենք և իրենց ձեռքէն ձեզ ազատելու ճարը նայինք: Կ'երեւայ թէ այդ նամակին վրայ էր որ անմիջապէս մեկնելու որոշում տուիք:

— Այո՛, պատասխանեց Հրեան, ձեզի չուզեցի ըսել, ճիշդ ատոր համար էր, բայց հիմա, այդ ձեր բերած լուրերուն վրայ շուարեցայ մնացի... աս ի՞նչ փորձանք ելաւ զլիսիս...

— Մէկ ճար մը կը մտածեմ կոր, ըսաւ Գարեգին, տեսնենք ի՞նչ կ'ըսէք:

— Ի՞նչ:

— Ասիկ Աթէնք կ'երթաք, հոնկէ երկաթուղիով Բագրաս ու Բագրասէն որ եւ է կերպով կրնաք ուզած կողմերնիդ երթալ: Կարծեմ ասանկով Հայերը ձեր հետքը կը կորսնցնեն... միայն թէ միշտ զգուշութեամբ պէտք է վարուիլ:

— Ի՞նչ ընեմ... Խորհուրդ մը տո՛ւր, հարցուց Ալրամ յուսահատ:

— Դուք ի՞նչ կը մտածէք կոր...

— Չեմ գիտեր, շուարեր մնացեր ես... պիտի ձգէի երթալի, հիմակ կը տեսնամ որ ատուով ալ պիտի չկրնամ ազատիլ: Արդեօք ի՞նչպէս կ'ըլլայ եթէ սա նամակը ոստի...

կանուժեան հաղորդեմ, դուն ալ սրճարանին մէջ լսածներդ պատմես ու ձերբակալել տանք այդ երեք հոգին եւ խընդ-րենք ոստիկանութեանն որ շոգենաւին մէջ ալ խուզարկու-թիւն մը ընեն ու կասկածելի Հայերը զուրս հանեն...

— Ես մտածեցի ատիկա, բայց շատ մեծ խնդիր կը բանայ զլիսերնուս: Եթա անստորագիր նամակի մը կարեւորութիւն չեն ի տար, ասկէ գատ սրճարանին խօսակցու-թիւնը կրնան ուրանալ և ըսել որ սխալ հասկցած եմ, բանի որ հայերէն ու տաճկերէն խառն կը խօսէին... յետոյ այդ ամենքը աւելի պիտի կատղեցնէ Հայերը: Վարպետութեամբ, առանց հետք մը ձգելու աներեւոյթ ըլլալու է, ա՛ս է, ըստ իս, լուսագոյն ճամբան:

— Ի՞նչպէս...

Գարեգին անմիջապէս չպատասխանեց: Մտածելու, միջոց մը փնտռելու ձեւը առաւ, յետոյ՝ մէկէն՝ հանճարեղ գիւտ մը ըրածի պէս դոչեց:

— Գտայ... Տեսէ՛ք ի՞նչ կ'ընէք. ժամը մէկին ատեն, ներք կառք մը կը նստիք ու պանդոկէն կը մեկնիք. ըսելով որ շոգենաւ կ'երթաք կոր, յետոյ ճամբան կառքը դարձնել կուտաք ու Ֆալէրոյ կ'երթաք, հոնկէ շոգեշարժ թրանվայով Աթէնք: Այս կերպով կառավարն ալ ձեր հետքը կը կորսնցնէ: Աթէնք պանդոկի մը մէջ, կամ ձեր վարձած տունը կը փակուիք մինչեւ վաղը առտու եւ առտուն ութնուկէսի կառախմբով կը մեկնիք դէպի Բարսա: Այս կերպով վստահ եմ որ Հայերը ձեր հետքը պիտի կորսնցնեն: Արդէն, առանց տեսնուելու, անգամ մը որ Բիրէէն հեռանաք, ա՛յ ապահով կրնաք ըլլալ, որովհետեւ չեմ կարծեր որ Աթէնքի Հայերն ալ ձեզի ճանչնան կաս ձեզ սպաննելու խորհրդին մասնակից ըլլան:

— Անշուշտ չէ, գոչեց Ալրամ, արդէն աստ ամենքը թու Արշակ կոչած երիտասարդիդ գործերն են... ես աղէկ գիտեմ:

— Ուրեմն կը ճանչնա՞ք զինքը...

— Այո՛, խօսեցիք մեր դրացին էր, Թիւրքերը իր հայրն ու եղբայրը սպաննեցին... իր ընտանիքն ալ միտքը ա-նանկ է դրեր որ իբր թէ ես մատներ եմ զիրենք... ընդհակառակը ձեռքէս եկած օգնութիւնը ըրի իրենց: Աշխարհ այսպէս է, միշտ աղէկութեան փոխարէն չարիք կը տեսնաս...

— Արդէն Հայերը սպիրախտ մարդիկ են, վճռեց Գարեգին:

— Ինչ որ է, հիմակ գանք թու խորհրդիդ. ինձի գէշ չերևար կոր ատիկա... միայն թէ, առանց լեզու զիտնալու, մինակս ի՞նչպէս պիտի ընեմ...

Գարեգին չպատասխանեց և թողուց որ Հրեան ըստիպուի իրեն զիմել:

— Հոս եկած օրէս ի վեր, ըսաւ Ալրամ, առաջին վայրկեանէն քեզ ճանչցայ ու բարեկամ ունեցայ և ձեռքէդ եկած ծառայութիւնը չի նայեցիր ինձ. հիմա պիտի խնդրեմ որ այս ծանր պարագային ալ իս միակ չձգես... արդէն, ինչպէս ըսած եմ, վրտահ եղիր որ ինձի մատուցած ծառայութիւնդ առանց փոխարինութեան պիտի չմնայ:

— Շիտակը, Ալրամ էֆէնտի, շատ կը փափաքէի մինչեւ վերջը օգտակար ըլլալ ձեզի, պատասխանեց Գարեգին, բայց դժբախտաբար խիստ ստիպողական դործ մը ունիմ ու պիտի չկրնամ ձեզի ընկերանալ... դո՛նէ մէկէն մինչեւ երեք: Անկէ ետքը, եթէ կ'ուզէք տեղ մը որոշեցէք ու հոն իրար գտնանք:

Գարեգին երկու նպատակ ունէր Հրեային ընկերանալ չուզելով, նախ՝ չէր ուզեր որ պանդոկէն միասին կառք նստէին, որով ծառաներուն եւ կառավարին ուշադրու-թիւնը իր վրայ հրաւիրած պիտի ըլլար. եւ յետոյ ինքզինքը ծանրէն ծախելով կը փափաքէր վանել որ և է կասկած որ կրնար ծագիլ, իր մասին, Ալրամի մտքին մէջ:

— Չէ՛ք կրնար այդ ձեր կարեւոր գործը վաղուտն ձգել, պնդեց Հրեան:

— Ոչ, անկարելի է: Բայց իօսք կուտամ որ ամէն ջանք կ'ընեմ գալ ձեզ գտնելու ժամը երեքին: Եթէ կ'ուզէք ինձի սպանեցէ՛ք Աթէնք, Սթամբուլի մօտ գտնուած գարեջրատունը, հո՛ն ուր գացինք տուն փնտռած օրերնիս: Առանձին տեղ մըն է ու ձեր վարձած տունէն ալ շատ հեռու չէ: Այնտեղ կ'որոշենք թէ զիշերը ո՛ւր պիտի անցընենք:

— Լա՛ւ, բանի որ ուրիշ ճար չի կայ, այնպէս ընենք, պատասխանեց Հրեան համակերպութեամբ:

Գարեգին ժամացոյցը նայեցաւ ու ոտք ելաւ մեկնելու համար:

— Ուրեմն այսպէս, ժամը երեքին հոն կուգաս, ըսաւ Հրեան, ես անպատճառ նստած կ'ըլլամ, եթէ մինչեւ այն ժամանակ Հայերը գլխիս փորձանք մը չբերեն:

— Մի՛ վախնաք, Ալրամ էֆէնտի, պատասխանեց Գարեգին խնդալով, վստահ եղիք որ վաղը առտու ձեզ ապահով Բարսաի կառախուբը պիտի գնեմ... հիմա վտանգը խրտիվիէի շոգենաւին մէջն է, ուրիշ ամէն տեղ վտանգ չի կայ ձեզի համար:

Գարեգին մեկնեցաւ:

Քիչ մը ետքը ծառան եկաւ իմաց տալու որ կառքը կը սպասէր դրան առջեւ և թէ խրտիվիէի շոգենաւը հասած էր նաւահանդիստ ժամէ մը ի վեր:

Ալրամ անմիջապէս վար իջաւ, հետը առնելով պըզտիկ պայուսակ մը, միակ բեռը զոր ուզած էր հետը կըրել, կառքը մտաւ ու ճամբայ ելաւ:

Կէս ժամ ետքը կառքէն կ'իջնար Ֆալէրօ և կը մտնէր Աթէնք գացող շոգեշարժ թրանվայը:

Երեքին երբ Գարեգին մտաւ նշանակեալ գարեջրատունը Հրեան արդէն իրեն կը սպասէր:

Ե. Օ.

(Շարունակելի)

# ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ

ԵՒ

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԲՐՈՒԿԱԿԱՆՍԱ

Երբ արագոյն—Արեւելքի իսլամներուն մէջ միութեան գաղափարը արմատ ձգած է: Այս մասին կարելի չէ որոշ կարծիք մը յայտնել, — որովհետեւ գաղափարի մը տարածումը չի կրնար վիճակագրուիլ ինչպէս նորագործներու թիւը: Բայց սա ճշմարիտ է որ իսլամութիւնը ոչ մէկ տեղ — բացի Ափրիկէն — այնքան կը յառաջդիմէ որքան Երբ արագոյն—Արեւելք: Ռուսիա և Անգլիա, որոնք շահ ունին աշխարհին այդ մասին մէջ իրաց արդի կացութեան պահպանմանը, արդէն սկսած են մտատանջիլ այս մասին, և Չինաստանի մէջ իսլամութեան յաջողութիւնը մասնանիջ կ'ընեն իբր վտանգ մը որուն Եւրոպա այն ատեն միայն պիտի հաւատայ երբոր ա՛յլ շատ ու չէ: Մնաց որ, ինչպէս պիտի կրնար ատոր առաջը առնել:

Իսլամ հասարակութիւններու ծաւալումը կրնայ ներկայացուիլ վիթխարի սարդոստայնի մը պատկերով, որուն կեդրոնը գտնուելը Մէքքէն և որուն շրջանակը Մալայեան արշիպելագոսին և աւստրալեան կղզիներուն հարաւային արեւելքէն անցնելու: Երբային շատ բանուի ճամբայ մը շինացի Նաքէպէնտիաները և Բատրիաները Մալայեան կղզիներու իրենց ընկերներուն կը միացնէ: Այդ ճամբուն էր որ հետեւեցան շինացի առաջին ճամբորդները որոնք, Մարգարէին մահուրէն քառասուն տարի ետքը, իրենց գրուածքներուն մէջ կը յիշեն արդէն մահմետական հաստատութիւն մը Սումատրա կղզիին մէջ: Մալայեան արշիպելագոսին վերջին վեց հարիւր տարուան պատմութիւնը իսլամութեան ծաւալման պատմութեան ամենէն շահեկան էջն է: Ստուգարաններէ գիտենք թէ, այդ երկար ժամանակաշրջանին, իսլամ միսիոնարներ այդ կղզիներուն մէջ առաջելութեան անհաւատալի դործունէութիւն մը ցոյց տուած են:

Տարակոյտ չկայ թէ Մալայեան արշիպելագոսը՝ արեւելքի և արեւմուտքի իսլամին միջեւ միութեան ճշմարիտ դիմ մըն է, և եղած է միշտ: Հոլանտացի ահանաւոր արեւելագէտ Մնուք Հուրկրոնեկի գրքերը այս մասին շատ ճշգրիտ տեղեկութիւններ կուտան: «Մէքքէ» ի վրայ իր գրքին վերջին գլուխը կը վերաբերի մալայեան արշիպելագոսին ուխտաւորներուն որոնք ամէն տարի հազարնէրով Արաբիոյ սուրբ քաղաքը կ'երթան, ուր անոնց վրայ կը թափ «ձակաք ժութաուաֆներու» վահմակը. — որովհետեւ Մէքքէն, պարզամիտ հաւատացեալներու շահագործմանը տեսակէտով, կաթոլիկ ուխտատեղիներէն վար չի մնար: Հնդիկ արշիպելագոսին ջերմոսանդ իսլամահանրը, մահնո՞ Մէքքէն տեսակ մը Երուսաղէմ է: Աստուծոյ հաճելի գործ մըն է երթալ իր ձերութեան վերջին

որերը հոն անցնել: Մալայեան գաղթականութիւն մը կայ հոն որ կը բաղկանայ ուսանողներէ, գիտուններէ, հանգստի կոչուած պաշտօնատարներէ և ուրիշ զիւրակեցիկ անձերէ: Սուրբ քաղաքին փողոցներուն մէջ, Սանտի արշիպելագոսին բոլոր գաւառաբարբառները կը լսէ մարդ: Մալայեան կղզիները, Պ. Սուրբ խօսքին նայելով, իրենց բնակչութեան թիւին բաղդատմամբ՝ ամենէն աւելի ուխտաւոր զրկող իսլամական երկիրն է: Արաբիոյ սուրբ քաղաքներուն համար հսկանաւոր իսլամներուն այս յարաճուն սէրը անշուշտ ինքնին կարեւորութիւն պիտի չ'անենար, եթէ չըլլար Մէքքէի մալայեան գաղութը զոր Պ. Մնուք «Իսլամութեան սիրտը» կ'անուանէ: «Հոն է որ կը յանգին, կ'ըսէ, միստիքական միաբանութիւններու բոլոր թելերը, հոն է որ պրքեր կը գնեն, հոն է որ՝ բարեկամներու և ազգականներու միջոցաւ՝ համիսլամական կեանքին ու ձգտումներուն կը մասնակցին:» Անոնք թղթակցութիւն մը կը կատարուի մայր—հայրենիքին Մալեզներուն և Մէքքէ հաստատուածներուն միջեւ: Արաբիոյ մէջ հրահրուած կրօնական խանդավառութիւնը Մալայեան կղզիներուն բոլոր ընկերական խաւերը կը թափանցէ:

Այսօր, Մալեզիոյ մէջ, 31 միլիոն իսլամ կայ. զըզրոցներուն թիւը անպարզ կ'աւելնայ: Միաբանութիւնները և ընկերակցութիւնները, մասնաւորապէս Սուսաիաներունը, ամբողջ Մալայեան արշիպելագոսին մէջ սրբաւայրներ ու հաւաքման վայրեր ունին. — համիսլամական վարդապետութեանց ճշմարիտ վառարաններ: Չըսուեցա՛ւ նոյն իսկ թէ Ֆիլիպեան կղզիներուն մէջ իսլամ ընկերակցութիւններն էին սր Սպանիացիներուն զէմ առեղութիւն և պատերազմ գրգռեցին: Ասիկա զարմանալի չէ, երբ ներկատենք որ մահմետականը այդ երկիրն տէրն էր երբ 1521ին Սպանիացիները եկան անոր տեղը առին:

Մալայեան իսլամները չեն շատանար Մէքքէի հետ անոնց յարաբերութիւն մշակելով: Մահմետականութիւնը անոնց կը պարտի իր ծաւալումը Աւստրալիոյ և Ուլիիանիայի հեթանոս ժողովուրդներուն մէջ: Իսլամութեան դարձած Բարուաներու և ուրիշ առարկայապաշտներու հազարն թիւը, որոնք «Սնուսի» անունը առած են հիմակ, ցոյց կուտայ թէ համանուն շէյխը և իր խուանները օտար չեն այս հաւատատարածութեան գործին:

Ասիոյ մէջ իսլամութեան արդի կացութեան այս համառօտ պատկերը աւարտենք յիշեցնելով թէ Ասիոյ իսլամներուն թիւն է 164,687,084 հոգի, և անցնինք Ափրիկէի ուր իսլամը հակառակ եւրոպական բարքերուն և գիտութեանց հետ ունեցած շփմանը, իր հաւատատարածութեան գործունէութիւնը առաջ կը տանի այնպիսի խանդով մը որ ուշադրութեան արժանի է:

\* \*

Աշխարհագրապէս, Ափրիկէի երկու երրորդը իսլամութեան կը պատկանի:

Ափրիկէի հիւսիսակողմը, Եգիպտոսէն մինչեւ մա-  
րոքեան սահմանազուիւրը, եւրոպական բանակները զըս-  
պած են իսլամ ժողովուրդները: Ուստի լուսաբանները կը  
կարծեն թէ իսլամութիւնը կը նահանջէ այդտեղ: Բայց  
այդ կարծիքը պատրանք մըն է լոկ: Իսլամը զսպուած,  
ճնշուած է. չի' նահանջեր: Գոյնով այն հռչակատը խօս-  
քին թէ Ֆրանսան իւրացնելու վրայ է Ալճերիայի արաբ-  
ները, ատիկա լոկ ցնորք մըն է, որ իրենց թէն անդին  
չտեսնող քաղաքագէտները մինակ կրնայ պատրել:

Եգիպտոսի մէջ, կացութիւնը աւելի լաւ չէ: Միջերկ-  
րականի իսլամը՝ Եւրոպայէն քաղաքակրթութեան շարք  
մը մինակ առած է: Եգիպտացի մը՝ Մուսթաֆա Քամէլ,  
կրնայ ցոյց տալ մեզի թէ երիտասարդ-իսլամ կուսակցու-  
թիւնը ինչ կարծիք ունի Եւրոպայի եւ անոր քաղաքա-  
կրթիչ պաշտօնին վերաբերմամբ. «Եւրոպան, կ'ըսէ,  
իսլամները կը զայրացնէ՝ անոնց նկատմամբ ունեցած  
վարմունքովը: Ալ չենք հաւատար Եւրոպայի կարծեցեալ  
քաղաքակրթութեանը. իսլամական վերածնութեան շար-  
ժու մը օր օրի կը ծաւալի:» Երբ Եւրոպայի բարեքնորուն  
տեղեակ մէկը այսպիսի դատաստան մը կ'ընէ, ա'լ կ'երե-  
ւակայէք թէ ինչ կարծիք տիրելու է բուն իսլամական Ափ-  
րիկէի մէջ:

Մարոքը, Ափրիկէի արեւմտեան կողմը, իսլամ մոլե-  
ռանդութեան միջնաբերդն է: Հոն, միաբանութիւնները  
և ընկերակցութիւնները իրենց ձեռքին մէջ ունին կրօնա-  
կան եւ քաղաքական իշխանութիւնը, և անյողող թշնա-  
մութիւն մը ցոյց կուտան եւրոպական ու եւ է ազգեցու-  
թեան դէմ: Մտիկ ընենք մարոքցի օրագրողին որ,  
Թանճէրի է Մուսայատ լրագրին մէջ վերեւ յիշուած խու-  
ճապի աղաղակը արձակած է: Արեւելքի այսօրուան անկ-  
եալ վիճակը նկարագրելէ յետոյ, հեղինակը կը խօսի եւ  
րոպական ազգերուն ահեղ զօրութեանը վրայ, որոնք, իս-  
լամութեան ամէնէն ճոխ երկիրները մէջերնին բաժնելէ  
ետքը, հիմակ մնացեալ երկիրներուն տիրանալու կը հե-  
տամտին: Աչքէ կ'անցընէ անհաւատին ձեռքը ինկած իս-  
լամական մեծ երկիրները, Ալճերիա, Թունուզ, Եգիպ-  
տոս, Հնդկաստան, Կեդրոնական Ասիա: Յետոյ կ'ա-  
ւելցնէ. «Կարելի' է Եւրոպացիներուն յարձակումները ար-  
դիւնել, արշաւանքները վանել իսլամ ազգերուն երկիր-  
ներէն, ու մահմետականներուն կորսնցուցած ստացուածք-  
ներն ու պետութիւնները վերստին ձեռք բերել: Այո',  
պիտի պատասխանեմ, եթէ ձայն մը, արեւմտեան Ափ-  
րիկէէն մեկնելով՝ Օսկարայի տափաստանները կտրէ  
անցնի, Նեղոսի ափունքէն Արաբիոյ հովիտներուն մէջ  
արձագանգէ, Հնդկաստան հասնի, եւ, Սուրիոյ գաշտի-  
րէն ու լեռներէն անցնելով՝ գայ իր արձագանգովը զը-  
ղըրդէ կ. Պոլիսը: Կամ եթէ հով մը Արեւելքէն փչէ, գայ  
ցնցէ Գահիրէի բուրգերը, ու անկից դէպի արեւմուտք  
ուղղուի, այդպէս յառաջ բերելով ափրիկեան ցեղերուն  
զարթնումը եւ ժողովուրդներուն համախմբումը:» Մի-  
ութիւն եւ հայրենասիրութիւն, ահա', մարոքցի օրագրո-  
ւին կարծիքով, այն ահեղ զէնքերը որոնցմով իսլամա-

կան առաջին կայսրութիւնը հիմնուեցաւ և որոնք, ժա-  
մանակին օգնութեամբ, կարող են վերստին ձեռք բերել  
կորսուած մեծութիւնները:

Դէպի արեւելք, Թարապուտի, Վատայի եւ Եգիպ-  
տական Սուլթանին միջեւ գտնուող եռանկիւնին մէջ,  
զործօն իսլամութեան մեծ կեդրոն մը կայ, ուսկից Բատ-  
րիաներու, Սուլթաններու և Թիմանիաներու առաքեալ-  
ները Սենեկայի և Նիկէիի Արաբներուն ու հարաւի հե-  
թանոսներուն տարին իրենց աւետարանը. — այդ Թիմա-  
նիաները վաճառականներ ոչ քրոքականտիսղներ են, եր-  
կու արհեստ որոնք իսլամ միսիոնարին մէջ միացած  
են: Ընկերական ու բարոյական վերականգնումը զոր  
Մուհամմէտի կրօնը առաջ կը բերէ խաւարակուտ ցա-  
մաքին առարկայապաշտ ժողովուրդներուն մէջ, ակնե-  
րեւ է: Թոյլատու մտքեր մինչեւ իսկ այնչափ առաջ  
դացին որ փոխանցական կրօնքի մը դերը վերադրեցին  
իսլամութեան՝ Ափրիկէի մէջ, եւ ատիկա ընդունելի զը-  
տան՝ քրիստոնէութեան ճամբան հարթելու համար:  
Բայց ատիկա տարօրինակէս անգիտանալ է թաքուն ոյժը  
այդ կրօնքին, որ այնքան հրաշալի կերպով կը յարմա-  
րի մարդկութեան մէկ մեծ մասին բարոյական պէտքե-  
րուն:

Քատրի, Սընուսի կամ Շատէի խուաններուն այս  
անհատական առաքելութեանց ձեռք բերած յաջողութիւն-  
ներովը շատանալով, Մէքքէի և Եգիպտոսի իւլեմաները  
իսլամական հաւաքին մէկ ճշմարիտ վերածնութեանը  
կ'աշխատին ափրիկեան հողին վրայ: Զուտ, և սրբա-  
զան աւանդութեան աղբիւրներէն քաղուած իսլամութիւն  
մը ծաւալելու համար հեթանոս ժողովուրդներուն մէջ,  
ամենուրեք նոր թուի մը տրուած է պարոցական կրթու-  
թեան: Գահիրէի մէջ իսլամ քարոզիչներ կը պատրաս-  
տեն կեդրոնական Ափրիկէի համար Տարֆուրէն, Վա-  
տայիէն, Պորնուէն եկած սեւամորթ ուսանողները, ո-  
րոնք Գահիրէի մեծ մզկիթին մէջ իսլամական հաւատ-  
քին և վարդապետութեանց ուսումնասիրութեամբ կը  
զբաղին, երթալով կը շատան: 1837ին, այդ ուսանող-  
ներուն թիւն էր 500. այսօր 12,023ին կը հասնի:

Նոյնպէս երեսի վրայ թողուած չեն այն իսլամները  
զորոնք քաղվին բերմունքը ափրիկեան ցալաքին մինչեւ  
ժայրագոյն-հարաւակողմը նեաւած են և որոնք Բարբյու-  
սոյ Գլխուն քրիստոնեաներուն մէջտեղ կ'ապրին: Այդ  
Բարբյուսոյ Գլխուն իսլամները, որոնք մալայեան ծագում  
ունին և թերեւ ալ — իրենց տիպարին ինչ ինչ առանձնա-  
յատկութիւններէն զատելով — հոլանտական արեւան խառ-  
նուրդ մը կը կրեն, հազուադիւտ յամառութեամբ մը պա-  
հած են իրենց կրօնքը: Բարբյուսոյ Գլխու իսլամներուն  
և իրենց հիւսիսային ափրիկէի կրօնակիցներուն միջեւ  
ասկից առաջ ալ միշտ յարաբերութիւն կ'աւր: Չենք զի-  
տեր: Բայց սա իբրա է որ այսօր Մէքքէի մէջ կը գուր-  
զուրան այդ իսլամներուն վրայ: Անոնց համար յատ-  
կապէս իսլամական աղօթագիրք մը և վարդապետութեանց  
հաւաքածոյ մը տպել տուած են կ. Պոլիս՝ հոլանտական

լեզուով և արարական տառերով: Մութաուաֆնները չեն խրաչիր ձիտաէէն մինչեւ Գէրգաուն երկար ճամբորդութենէն, և հոն կ'որսան այն հոլանտախօս ուխտաւորները որոնց կը հանդիպի մարդ Մէքքէի փողոցներուն մէջ: Բարեյուսոյ Գլխուն գաղթականութեան մէջ, կրօնական զգացումներու զարթնումին հետեւանքը եղած է եռանդով յաճախել մզկիթները, ինչպէս նաև իսլամութեան տարածումը Քաֆիրներուն մէջ, որոնց թերազրիչները եղած են աղամանդի հանքերուն մէջ աշխատող Հնդիկներ:

\* \*

Իսլամական աշխարհը, ինչպէս տեսանք այս ընդհանուր պատկերէն, բաղկացած է ըստ երևոյթին այլատարր զանգուածներէ. բայց, իրօք, ամենքն ալ նոյն խանդոտ ու մոլեռանդ հողին ունին: Ասիկա կը բաւէ ցոյց տալու այն վտանգները որ Եւրոպայի համար կրնան առաջ գալ իսլամական միութենական շարժումէն: Անշուշտ, Մուհամմէտի կրօնքը դաւանող ժողովուրդներուն պէսպիսութիւնը՝ անհնարին կը դարձնէ նախկին Հին կայսրութեան պէս նոր Խայիֆայութեան մը վերածնութիւնը, ինչպէս կ'երազեն Սընուսի մը կամ Ապտալիւ-Համիտ մը: Այն դամբը զորոնք եւրոպական քաղաքակրթութիւնը գամած է մահմետական շէնքին մէջ, այնչափ դիմացկուն են որ կարելի չէ որ տեղի տան բոլոր իսլամական ժողովուրդներուն միացեալ ճիգերուն, մանաւանդ որ միահաղոյն փորձուած ո եւ է ճիգ անիրականալի է, ո՛չ միայն իսլամ ազգերուն լեզուի, ցեղի եւ շահերու տարբերութեանը՝ հապա նաև արդի իսլամ ժողովուրդներուն քաղաքական ակնյայտի տկարութեանը պատճառաւ: Սակայն միշտ աշուրնիս բաց պահենք մեր դիմացը կատարուող եղելութեանց վրայ, որոնք միշտ պիտի յիշուին իսլամութեան բնաշրջման պատմութեանը մէջ:

Եթէ եւրոպական քաղաքակրթութեան հետ ուղղակի շօշափման մէջ գտնուող իսլամական մեծ կեդրոններուն ինչ ինչ միջավայրերուն մէջ հաւատալիքներու թուլտուութիւն մը երեւան գալու վրայ է, ասոր փոխարէն՝ իսլամական աշխարհը կազմող խորին զանգուածները յետադիմական լայն շարժումէ մը բռնուած են: Համիսլամական գաղափարը, զոր խաւարամտութիւնը ներկայացնող միաբանութիւնները ընդունած են, զոր յառաջգիւղութեան անհաշտ թշնամի միտիքական հոգիներ կը քարոզեն եւ զոր միաբանութիւններէ ելած առաքեալներ ամէն կողմ կը տարածեն, վտանգաւոր գաղափար մըն է: Կ. Պոլսոյ մէջ արդէն վարպետներն կը շահագործեն այդ գաղափարը՝ ի նպատակ հակաեւրոպական քաղաքականութեան մը, և ասոր շնորհիւ իսլամական աշխարհին մեծագոյն մասին համակրանքը վաստակած են: «Բոլոր միւսիւմանները եղբայր են» կը հռչակէին Կ. Պոլսոյ կրօնաւորները, օսմանեան բանակին յաղթանակը պանծացնելով: Այդ «եղբայր» բառը, որ կը նշանակէ թէ՛ եղբայր կրօնքով և թէ՛ անպամ միաբանութեան մը, ակներեւ կերպով

ցոյց չի տար համիսլամական յայտագիրը, որ է տիեզերական իսլամական միութիւն՝ խուանութեան զրոշակին ներքեւ:

Չէ՛, այդ բոլոր ժողովուրդները բնաւ օր մը պիտի չմէկտեղին՝ միեւնոյն ճիղը թափելու համար, ու եթէ ընկին իսկ՝ այդ ճիղը անզօր պիտի մնար: Բայց արդէն, ամենուրեք ուր իսլամը շօշափման մէջ կը մտնէ Եւրոպացիներուն հետ, Ափրիկէ, Հնդկաստան, Կեդրոնական Ասիա, Մալզիա, համիսլամական գաղափարին ներմուծումը՝ քրիստոնէայ պետութեանց համար խռովութիւններու և դժուարութիւններու նշանը եղած է: Եւ համիսլամութիւնը դեռ իր վերջին խօսքը ըսած չէ:

ՏԼԲՈՆ ԵՒ ՏԷՔԱՐԴ

(Ռեդիւտ տը Բասի)

ՎԵՐՋ

ԱՆՑԵԱԼԻ ԴԷՄՔԵՐ

Գ.

Օտեանը երբ իբր զրագէտ կ'ուզեմ ուրուագծել, Հին յիշատակ մը կ'արթննայ մտքիս մէջ: Արքայ Քոնսթանթինի թարգմանութեանը առթիւ, 1885ին, Օտեանի զրական ուղղութիւնը քննադատող յօդուած մը պատրաստած էի, բայց հրատարակման պահուն բացատրութիւններս մեղմացուցի, գաղափարներս անփոփոխ սակայն պահելով: Ետք քիչ անգամ պատահած է ինծի որ ինքնաբերաբար մեղմացնեմ հռչականուն անձնաւորութեանց հակառակող յօդուածներս: Այդ յօդուածս իր շափաւոր ոճին մէջ իսկ բարեկամական չէր Օտեանի զրակաւորութեանը, զոր ոչ ոք երբեք քննադատած էր մինչև այն ատեն, ոչ ալ անկէ ետքը քննադատած է: Բարիդէն Օտեան անձնական նամակով մը պատասխանեց. հետաքրքրական էր այդ նամակը. չեմ գիտեր ինչ եղաւ անկիւն մը մտոցուած է, թէ 90ին ու 96ին իմ բացակայութեանս այրուած թուղթերուս մէջն է: Կը յիշեմ թէ 1885ին մտքիս ու սրտիս միջեւ պայքար մը կը մղուէր զրակեանս ոճը մեղմացնելու հարկին համար: Ու հիմակ, տասնըհինգ տարի ետքը, երբ դարձեալ կը վերադառնամ Օտեանի զրականութեանը, դարձեալ նոյն պայքարն է որ կը կրկնուի: Ինչո՞ւ:

Ինչ որ գրած է Օտեան՝ նամակ, յօդուած, յառաջաբան, ամէնուն մէջ միշտ իր սրտին տրտմութիւնը կը մերկացնէ: Վերաւոր հոգիով մարդն է: Արտաքին երևոյթներէն դատելով Օտեան պէտք էր բաղդաւոր մէկը համարուէր: Թիւրքիոյ մէջ քրիստոնէի մը վերապահուած քաղաքացիութեան գերագոյն աստիճանին հասած էր: Օս-

մանեան փառքերն ու պատիւները կը շոյալուէին իրեն. ազգեցիկ ձայն ունէր թիւրք նախարարներու խորհրդին մէջ. կեանքի հեշտութիւնները չէին պակսեր իրեն. ու հայ ազգը զինքը կը սիրէր, կը մեծարէր: Եւ սակայն իր հոգին տրտում էր: Ինչպէս Հայրիկ օր մը Ազգային ժողովին մէջ կը յայտարարէր թէ « Հայաստանի թշուառութեանց պատկերն եմ ես », նոյն եւ Օտեան կրնար ըսել. « Հայ ազգին ցաւերուն պատկերն եմ ես: » Իր տրտմութիւնը իր ցեղէն ժառանգած էր: Դրսէն՝ երջանիկ, ներսէն դժբաղդ, ահա ինչ որ էր Օտեան, վասն զի սրտին խորէն դժգոհ կը մնար: Հայը զարեբու ստրկութեամբ այլ ևս խոնջ ու յոգնած, իր երջանկութիւնը կեանքի նիւթական զոհացումներէն միայն կը սպասէ: Բանւորը որ օրական հացը կը հանէ, խանութպանը որ կը շահի, վաճառականը որ կը հարստանայ, պետական ժառայութեան մէջ գտնուողը որ մինչեւ աստիճան մը կը յառաջանայ թիւրքական պաշտօններու մէջ ու քանի մը շքանշան կը ստանայ, ամենքն ալ « Փանոց քեզ Աստուած » գոչելով ինքզինքնին երջանիկ կը համարին: Ազնուական հոգին սակայն կը վերաթեւէ զէպի աննիւթական, բարոյական բնագաւառ մը ուր մինչեւ չհասնի՝ տրտում է հոգին: Վայելքը ազատութեան մէջ կը փնտռէ, կ'ըմբոստանայ ընդդէմ այն անհաւասարութեան որ բիրտ ուժին ծնունդն է, ու մարդկային արժանապատուութեան զգացումը գերազանցօրէն ունենալով, ահեղապէս կը շարձարուի ստրկութեան լուծին տակ: Օտեան այդ տառապեալը եղաւ: Իր բոլոր փառքերուն ու պատիւներուն մէջ միշտ կը զգար թէ րայան է: Իր ամէն մէկ բառը զգուշութեամբ արտասանելու էր չխրտչեցնելու համար իր տէրերը՝ տաճիկ փաշաները, որոնց անձնասիրութիւնը զգուշելու արհեստը կատարելագործութեան հասցնելու է քրիստոնեան որպէս զի կարենայ քիչ թէ շատ ապրիլ: Իր տաղանդը, մտաւոր կարողութիւնները անձուկ շրջանակի մը մէջ գործածելու դատապարտուած է միշտ: Հաստ Գեղամի մը որ Օտեանին հրամանին տակ պաշտօնեայ մըն է, յանկարծ օր մը փոշայի տիտղոսով իրեն հրամայող պետը կը դառնայ, ու ինքը կը պարտաւորի երթալ անոր էրեկը առնել՝ այսինքն քղանցքին համբոյր մը տալու ձեւացումը ընել, և հրամաններուն սպասել: Ու քանիներ այսպէս իր գլխուն վրայէն անցան: Անոնք տիրապետող ցեղին զաւակն էին, ինք՝ ընկճուածին, ստորկացածին, գերի եղողին: Ռուսիկ հոգիները այդ լուծին ամբողջ ծանրութիւնը չեն զգար, ուստի եւ չեն տառապիր: Օտեան ուսմիկ հոգի մը չէր, եւ ոչ այն գործնական մարդերէն որոնք ասպարէզի մը մէջ յառաջանալու համար ո՛ր և է միջոցի առջեւ վարանում չեն զգար: Դրան ծառայող միակ զբաղէտ հայ էֆէնտին եղաւ, ու իմաստասէրի և բանաստեղծի արհամարհանքովը նայեցաւ թըրքաշնորհ աստիճաններու և շքանշաններու վրայ: Երբ Պաշա աստիճանը ստացաւ, իրեն յայտնուած խնդակցութեանց առթիւ՝ մտերմի մը կը յայտարարէր. « Ինչ մեծ փառք, խրիսթաքին ալ Պաշա է: » Խրիսթաքին առնա-

վուտ մտավաճառ մըն էր, որ իր եղբորորդին հօրենական ժառանգութենէն զրկելով մեծաքանակ հարստութեան տիրացած էր: Օր մը Ծերենց Օտեանին զիտել կուտար թէ շաշխատիր ու կը բաւականանայ օրը վիկ երկու ժամ Դուռը երթալ գալով: « Ինչ ընեմ, կը պատասխանէր պետական մարդը, գործ չի կայ, ասպարէզ չի կայ: »

Հասաւ ժամանակ մը որ Օտեանի առջեւ բացուեցաւ լայնարձակ ասպարէզ մը ուր իր մտաւոր կարողութիւնը ցոյց պիտի տար, Օսմանեան կայսրութեան վերանորոգիչներէն մէկն ըլլալով: Սուլթան Ազիզը գահէն կէց ընելու ձեռնարկին պարագլուխներէն մէկն էր: Բայան այդ օրը ինքզինքը բարձրացած կը զգար: Խալիֆին տապալմանը համար Հայուն հետ իսլամին զանակցութիւնը արդէն քրիստոնէին դէպի հաւասարութիւն յառաջացումն էր: Նոր վարչութեան մէջ Օտեան գերակշիռ դեր մը կատարելու սահմանուած էր: Բայց այդ բոլոր իսլամ եւ հայ քաղաքականներ իրենց տաղանդովը ու փորձառութեամբը Հանդերձ չէին կրցած գուշակել այն գերազանցօրէն խորամանկ հրէշը որ զիրենք ամենքն ալ, որքան որ զօրեղ ըլլային, մէկիկ մէկիկ պիտի ջախջախէր, փշրէր, անհետ ընէր: Համիտ էֆէնտին հաշուի չէր առնուած: Այդ ահոյի անկումէն յետոյ Օտեան Բարիզ քաշուեցաւ, « Մեծ վտարանդին » տիտղոսը ստանալով քանի մը տարի ապրեցաւ, և առանց իր ազգին քաղաքական ժառանգութիւն մը ձգելու մեռաւ:

Իր տարագրութեանը մէջ Օտեան անշուշտ կը խորհրդի թիւրքիոյ վիճակին վրայ: Այլ եւս ներքի չէր թիւրքիոյ ընդհանուր վերածնունդէն Հայոց ալ բարելաւացում մը յուսալու երազանքովը օրօրուիլ: Ստեղծուած էր նոր կացութիւն մը ուր Օտեան իր ազգին քաղաքական դեր կամարը կրնար հանդիսանալ. բայց ոչինչ ըրաւ, վասն զի կամքի տէր մարդը չէր: Նամակի մը մէջ, զոր 1887ին յիշատակելու առիթը ունեցած եմ, Օտեան կը զրէր թէ « Իր սիրտը մեծ ըղձանքներով լեցուն էր, բայց իր մտաւոր կարողութիւնները շատ չափաւոր կը զգար անոնց իրականացմանը համար: » Կը կարծեմ թէ մտաւոր կարողութիւնը չէր որ կը պակսէր Օտեանին այլ զօրեղ կամքը: Իր ազգին համար գործելու ընդարձակ ասպարէզ ունէր Բարիզ. Հայ ազգը պիտի հետեւէր Օտեանի քժած և գործադրութեան դրած ուղղութեանը. բայց բան մը չըրաւ ան, վասն զի կամքը ջախջախուած էր: Յուսահատ եղած էր իր անհատական կեանքին մէջ, յուսահատ իր հանրային կեանքին մէջ: Ու հիմակ իր նշանաբանն էր « Զմէ՞ կեանք, զմէ՞ սէր, » զոր տարիներ առաջ արտասանած էր երբ զեռ երջանիկ մարդ մը կը համարուէր:

Օտեանին զրականութիւնը այդ մեղկացուցիչ նշանաբանին ազդեցութիւնը կը կրէ, միշտ տխուր, միշտ դժգոհ, միշտ տարտամ զրականութիւն մը որ իր մէջ կը ցոլացնէ գրողին սիրած մատենագրութեան պատկերը: Օտեան ուժեղ գրքերու բարեկամը չեղաւ: Երիտասարդութեանը՝ Լամարթինի Ռաֆայիլը կը սիրէր ու կը թարգմանէր. պետական մարդ՝ Քի իրպանը՝ կը կրէր Ալիշանէ

Տխրունին. հասուն տարիքին մէջ Ալպեր Տկբիի մը Մարքիզոնին կը գրուատըր, ու տարագրութեանը մէջ իր քրոջը թարգմանած խնկարոյր Արրայ ֆօնսքանքէնը սրբագրելով կը հրճուէր:

Ապշած մնացի երբ օր մը Օտեանի մէկ գրութեանը մէջ աչքիս զարկաւ տող մը թէ «Մարքիզոնին նման վէպ մը շատոնց է չեմ կարդացած»: Մարքիզոնին մէկն է այն հազարաւոր միջակ վէպերէն որոնք կը հրատարակուին ու կը մոռցուին, առանց հետք մը ձգելու ժողովրդի մը մասնազրուութեանը մէջ:

Օտեանի գրական հակումները բացայայտ կ'երեւին Բարիզէն վահրամ ստորագրութեամբ գրած նամակնե-րէն զորոնք Մասիս հրատարակեց: Կը յիշեմ թէ օր մը գրած էր. «Վէպն ինչո՞ւ է, որպէս զի մարդ միթէր-ուի իրականութենէն»: Վէպին կոչումին մասին Օտեանի այս ըմբռնումը ցոյց կուտայ թէ ընկերական գիտութեան ժամանակակից շարժումին հետամտած չէր: Վիպասանութիւնը միօրինակ սահմանով մը որակել հընարաւոր չէ, վէպը իբր ժամանց մը կրնայ զբօսցնել ընթերցողը, կրնայ իրականութիւնը մոռցնել տուող մորֆինն ալ ըլլալ, բայց նաև իր մեծ տեղն ունի ընկերական գիտութեան մէջ: Վիպասանութեան միջոցաւ կը յուզուին ընկերական յեղաշրջումի ամենամեծ խնդիրները: Վիպասանութեան կոչումը շատ անձուկ սահմանի մը մէջ ըմբռնելով Օտեան անհաշտ թշնամի հանդիսացաւ Զօլայի. իր բարիզեան թղթակցութիւններով որոնք ամենամեծ հեղինակութիւն կը համարուէին, շատ սխալ ու շատ մոլար դադափարներ տարածեյ Զօլայի եւ անոր գրական դպրոցին վրայ: Զեմ զարմանար որ Օտեան Զօլան ըմբռնելու անկարող ըլլար, վասն զի ինք երբեք հայ ժողովրդին ընկերական խնդիրներովը չգբաղեցաւ: Թէ՛ ազգային, թէ՛ պետական շրջանակներուն մէջ քաղաքական մարդը եղաւ միայն: Զբաղեցաւ հայ ժողովրդին լեզուովը, բայց ոչ բարբերովը. դասական գրականութիւնը, դասական գեղարուեստը, դասական կրօնքը բաւական համարեց հայ ժողովրդին զարգացմանը: Կուտող, մորսկող, հալածող ու հալածուած գրագէտը չեղաւ: Անմեղունակ աղջկան մը պէս փափուկ մնաց, պատրանքներով միշտ առ լի: Զօլայի մէջ Օտեան կը տեսնէր քաղաքի բացատրութիւնները միայն, ու նողկանք կը զգար ընկերական գարշութիւնները պարզող նկարագրութիւններէն, վասն զի չ'ըմբռնած թէ վիպասանութիւնը նաև ընկերական է; ու այդ հիանդանոցը, որ ընկերութիւն կը կոչուի, այցելող բժիշկը կարող չէ տեսած ախտերը ծածկել, զի անոնց դարմանին համար հա՛րկ է հրապարակել զանոնք: Արրայ ֆօնսքանքէի թարգմանութեանը առթիւ այս նիւթին վրայ Պոլիս գրած ատենս Զօլայի ուղղութիւնը հայկական օրինակով մը բացատրած էի, որքան հնար էր քաղաքիկ գարձուածքներով: Ինչ պիտի ընէր հայ վիպասան մը որ Պոլսոյ պանդուխտներու կեանքը իրականութեանը մէջ պարզել ուզէր: Պիտի այցելէր խան մը, օրինակ՝ Գասըլ-Փաշա, ու հոն պիտի

տեսնէր իրենց արտերէն խլուած երիտասարդներ որոնք յոյանոցի մը շուրջը կ'ապրին: Պիտի տեսնէր այն նիւթական աղտաւութիւնը որ այդ դժբաղդները կը հիւծէր, կը մաշեցնէր, պիտի տեսնէր այն մարմնական ու բարոյական ախտերը որոնցմէ վարակուեր են Պոլիս այդ խեղճերը. պիտի նկարագրէր այդ ամէնը իրենց իրական լոյնովը, վէբքերը պիտի տեսնէինք, գարշահոտութիւնները պիտի զգայինք. պիտի սարսույիցք, ու ամէնուս մաքին առջեւ հարցում մը պիտի ներկայանար. — Ինչո՞ւ այս չարիքները: Ու այդ չարիքներուն դարմանը ընկերական յեղափոխութեան մէջ պիտի փնտուէր: Ինչ որ Հայ մը իր ցեղին համար իբր հաճոյական պարտականութիւն պիտի կատարէր, Զօլա Ֆրանսայի համար ըրաւ: Իր նկարագրած դժբաղդութիւնները զուտ ֆրանսական չեն, այլ համամարդկային: Անշուշտ հայ վիպասանի մը աւելի հաճելի պիտի ըլլար վասիօրի պայծառ երկինքը նկարաչրել ու քաղցրանոյշ զեփուր երգել քան կոյանոցի մը դարշահոտութիւնները պարզել, նազելածեմ օրիորդները հանգէս բերել քան թէ աղտոտներ լուացող Հայաստանցի կիները, հրճուիլ այն երկտասարդներով որոնք Միւսէն բարձրնուն վրայ դրած կը քնանան քան թէ խշտներու վրայ տարածուած քրտինք թափող պանդուխտներով: Բայց ընդունինք նաև թէ աւելի մեծ զոհութիւն է զօլայական ուղղութեամբ վիպասան մը ըլլալ քան թէ լամարթիական, եւ աւելի առաջինութիւն պէտք է Աստուառչ կարգալու համար քան թէ Ռաֆայելը: Սակայն Օտեան Ռաֆայէլական էր, վասն զի թոյլ կամքով մարդն էր, իր ցաւերովը զբաղած միտքսկանը: Կրսծ տտոպանքներուն մէջ, զբացած վշտերուն մէջ աչքը միշտ երկինքն էր. կը պաշտէր, կը յուսար, կը հուատար: Միտհատ փաշայի կործանումէն յետոյ կեանքի իր իմաստասիրութիւնը համակերպութեան վարդապետութիւնը եղաւ:

Օտեանի գրականութիւնը մեր եկեղեցական մատենալուծութեան աշխարհական շարունակութիւնն է. Գրիլլօր Օտեան տեսակ մը Գրիլլօր Նորելացի է: Երկնքի մթնոլորտին մէջ միայն սփոփանք փնտող թախծալի գրականութիւն մը որ սակայն կը խռովէ, կը յուզէ, կը վրդովէ սեզի: Ինչպէ՞ս երբ կը մտնենք տաճար մը, մեր կրօնական մտածութիւնները ինչ որ ալ ըլլան՝ երկիւղած զգացումներով կը համակուինք, վասն զի թշուառութիւնը հոն լացեր ու սփոփանք փնտող է, նոյն երկիւղածութիւնն է որ մեր հոգին կը տկարացնէ երբ Օտեանի գրածները կը կարդանք: Մեծ ցաւերու եւ անգոր կամքի մը առջեւ կը գտնուինք: Ահա ինչո՞ւ կը կաշկանդուինք մեր քննադատութեանը մէջ:

\* \* \*

Վերջացող թուականի մը մարտն էր Օտեան. իր գրականութիւնը արտաքին երեւոյթով թէեւ նոր սեռ մը Հայոց համար, բայց յոգնած սերունդի մը հեծկտանքն էր:

Օտեանին քով կը բարձրանար Նահապետ Ռուսինեան բժիշկը: Իրարու մտերիմ սրտակիցներ, բայց ձգտումով, ուղղութեամբ, մաքի տրամադրութեամբ իրարու ներհակ Օտեան բնաշրջումի մէջ յառաջդիմութիւն փնտոող, Ռուսինեան յեղաշրջումի մէջ: Օտեան աւշային էր, Ռուսինեան ջղային: Ան՝ կը թարգմանէ Լամարթինի Ռաֆայէլը, որ աշնան գաղջ օրուան մը իրիկնամտին ցուցերն ունի, հեշտութեան հաճոյքովը սրտերնիս կ'ողողէ ու կը թմրեցնէ, միւսը՝ կը թարգմանէ Հիւկոյի Ռիչյ Պլասը, ուժի եւ ջղի տուածը: Ռիչյ-Պլաս ժողովրդին մարդն է որ սպասաւորութենէ սէզ Սպանիոյ նախարարապետութեան կը բարձրանայ. ոսմկավարութեան յաղթանակին խորհրդանշանն է: Հիւկոյի թարգմանիչը ըսբանչելապէս ոսմկավարական մարդն է, ու Ազգային ժողովին մէջ կը գոչէ. «Ժողովուրդ, դո՛ւն ես տէրը, քու հըրամանիդ պիտի հնազանդին ամենքը:» Ֆրանսայի մտաւորական մեծ շարժումի մը ատեն Բարիդ ուսանող եղած է. Միշլէ, Գիւնէ, Հիւկո հմայած են երիտասարդ Հայը, որ անոնց ազդեցութեամբը կրօնքին ու եկեղեցականութեան թշնամին կը հանդիսանայ. կը թարգմանէ քաղաքական ատենաբանութիւնը զոր Մեծ Բանաստեղծը Ֆրանսայի Ազգային ժողովին մէջ արտասանած է, եւ որով Հոմի ահեղագոչ կը ձայնէ. «Ի՞նչ ըրիր Սպանիան, ի՞նչ ըրիր Իտալիան»: Եւ ինք հայ արիբունն ալ Հայոց Ազգային ժողովին մէջ հայ եկեղեցականներուն երեսին կը պրոսայ. «Դո՛ւք, գո՛ւք, դո՛ւք էք հայութեան ամէն դժբաղդութիւններուն ծնողը:» Իսկ իր բարեկամը խթումի իրիկուան յիշատակներովը կը յուզուի, ու եկեղեցականները կը փայփայէ եւ կը մեծարէ: Ռուսինեան կրօնք մը ունի՝ Ֆրանսայի Յեղափոխութիւնը, եւ կ'ուզէ հայ ժողովուրդը այդ կրօնքին դարձնել: Անոր սկզբունքները կ'ուզէ ընդհանրացնել Հայոց մէջ, անոր տօնացոյցը հայացընել, անոր սկզբունքներովը կազմակերպել Հայոց վարչութիւնը: Յեղափոխական տարեցոյցը կը շինէ, հայացընելով Մեծ-Յեղափոխութեան ամիսները. Ժերմիկայը (9 21 մարտ-7 19 ապրիլ) Ծրօն կը հայանայ. Ֆրոբայը (8 20 ապրիլ-7 19 մայիս) Ծաղկօն, Ֆրիչքրիտօրը (6 18 օգոստոս-4 16 սեպտեմբեր) Մրգօն: Ազգային ժողովին մէջ տուրքերու վրայ գրաւոր ճառ մը պիտի արտասանէ. Օտեան կարդալով զայն դիտել կուտայ թէ իր հայերէնը շատ հասկցող պիտի չգտնուի, ուստի եւ իր դադափարները պիտի չկրնան յաղթանակել: Ռուսինեան չի գիշանիր լեզուին մէջ ո՛ր եւ է փոփոխութիւն մտցնել. «Ի՞նչ փոյթ, կը պատասխանէ, որ չհասկնան. եթէ կ'ուզեն հասկնալ թո՛ղ լեզուս սորվին:» Չէնք զգար ԳՅԻ սկզբունքի մարդը, «Թո՛ղ կորսուին գաղթականութիւնները քան թէ սկզբունքները» վարդապետութեան հարազատ աշակերտը:

Ռուսինեան իրեն յատուկ հայերէնը ունէր, փափկութեան ու կորովի զանգուած մը որ ընդհանրացած չէ, վասն զի բնութեան ծնունդը չէ այլ արհեստով ստեղծուած: Երկու բարեկամները հաւասարապէս տիրած էին հայ

լեզուին, բայց մինչ Օտեան չէր ուզեր նոր բառեր դարբնել և ընդհանրապէս կը ջանար արդէն գոյութիւն ունեցողները աւելի ընդարձակ կամ բարեփոխեալ նշանակութեամբ գործածել, Ռուսինեան կը ստեղծէր նորեր, կը կոտորտէր եղածները ու բեկորներէն բառեր կը յօրինէր: Օտեան իր բոլոր գրութեանց մէջ գրաբարին հոգիին ու դարձուածներուն հաւատարիմ կը մնար, իսկ Ռուսինեան յեղափոխեալ հայերէնով կը գրէր: Իր համագումարէր թէ ժողովուրդ մը յեղափոխելու համար անոր կեանքին ամէն երեւոյթները միանգամէն պէտք է յեղաշրջել: Հիմակ մեր ընթացիկ լեզուին մէջ կան շատ բառեր որոնց նոր կիրառութիւնը կամ ստեղծումը Օտեանի եւ Ռուսինեանի կը պարտինք. մասնաւորապէս խորհրդարանական բացատրութիւնները գրեթէ ամենքն ալ Ռուսինեան հայացուցած է:

Ռուսինեան ոսմկավարութիւնը Երեսփոխանական մարմին միջոցաւ կ'ուզէր հզօրացնել. ո՛չ ոք իրեն չափ կը գուրչուրար Ազգային ժողովին վրայ: Ինք յօրինեց և ընդունել տուաւ Ներքին կանոնադիր մը, երոպական խորհրդարաններու ու կանոնադրութեանց վրայ չափուած ձևուած, որուն շնորհիւ Սահմանադրութիւնը՝ «Քառսկուսի անիւններու վրայ հանգչող կառք մը» ըստ թիւրք փաշայի մը բացատրութեանը, այլ եւս բոլոր սկանիւններով անսայթաք ընթացաւ մինչեւ Ալըքեանին պատրիարք ընտրուած թուականը:

Ռուսինեան ազգային շրջանակին մէջ թէև անաչառ յեղափոխական մը — բառին 1789ի եւ 1848ի ֆրանսական իմաստովը, բայց իր սիրտն ալ, ինչպէս Օտեանինը, տրտմութեամբ լեցուն էր: Թարգմանած կամ հետետողութեամբ գրած բանաստեղծութիւններուն մէջ գրագէտ բժիշկը երեւան կուգայ իբր տառապեալ հոգի մը որ մեկուսացման, մոռացման կ'ըղձայ, գեղջկական կեանքին համար երազուն: Չորս տղ իրմէն, իր ու թերեւս իր սերունդին ալ, ըղձանքներուն հոգեբանութիւնն է:

Միև եզվար հող ունեւնայի, դիար բլլար դար  
կամ քէ ծործոր,  
Վազուկ չըրով, քիւ քըչիկ, վրտակ բլլար  
ակ կամ հեղեղ,  
Մէջը միև ծաս կը տընկէի, ծիրանի ծոր  
կամ քէ խընծոր,  
Մէջը միև ձիւղ կը շիւնէի, աղիւս, եղեգ  
և կամ բաղեղ:

Յետ մահուան իսկ Օտեան, Ռուսինեան, Նիկողոս Պալեան, Յակոբ Պալեան ո՛չ ծիրանի մը ունեցան, ո՛չ խնձորենի մը, և ո՛չ իսկ վայրի ծառ մը իրենց ոսկորներուն վրայ շուք սփռող. ու ո՛վ գիտէ, գուցէ գօս սամաւոին ալ հիմակ կարօտը կը քաշեն գերեզմանաքարէ զօրկ իրենց շիրիմները: Օտեան կը հանգչի Բէա-Լաչէզ, ուր վէժ մը ու տապանագիր մը հայ այցելուին սիրտը թունդ չեն հաներ ի յիշատակ այդ հոյակապ Հայուն: Բարիք ո՞ր անկիւնն է Յակոբ Պալեան: Եղբայրը Նիկողոս Պալեան

Պէշիկթաշի կամ Օրթագեղի գերեզմանատունը թաղուեցաւ. երկուքն ալ հիմակ թիրբ զօրքին ձիերուն աղբանսցնեան են: Տապանագիր մը կայ Շիշլի Ռուսիսեանի վրայ:

Ու տապանագրի մը մոտացումէն աւելի սրտածմլիկ է այդ տաղանդաւոր եւ ազնուամիտ Հայոց յիշատակին մը: Թագնացումը: Բայց մեր պատմութեան էն ծանր հոգեբանական մէկ եղանակին մէջն ենք, երէկը չէ որ մեզի մտահոգ կ'ընէ, այլ վաղը: Վաղը Հայութեան վերածնունդը պիտի ողջունենք, ու այդ օրը ամէն Հայու մտքին առջեւ պայծառափայլ պիտի փայլի յիշատակը Պալեաններու, Օտեաններու, Ռուսիսեաններու որոնք մեր վերածնունդին նախակարապետ ու հիմնաքարերը եղան:

Ա. Ա.

ՎԵՐՋ

ԿՍՆՆՑ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Բարիցի «Լա Ֆաուստ» յրագրի մէջ, որ կանանց շահերուն պաշտպանութեանը նշխարն է քաղաքական ու գրական օրաթերք մըն է «գոր կիներ կը վարեն, կը խմբագրեն ու կը շարեն», յռնուար 24ին, 25ին և 26ին ընդարձակ ուսումնասիրութիւն մը հրատարակուեցաւ Հայաստանի մէջ հայ կանանց վիճակի մասին: Թորոս ծագիրը, Ժիշլիս Վրատա, իր տեղեկութիւնները քաղած կը բռնի կովկասցի հայէ մը եւ իր օրինակները կ'առնէ միայն ու միայն կովկասի հայ գրագետներէն, ու շատ ալ յաջող չէ իր ընտրութեան մէջ — մանաւանդ երբ՝ անշուշտ իր տեղակատարին վստահելով՝ բացառիկ տեղ մը կուտայ Նար-Դոս անուն անեղան գրողի մը: Կը ցաշիք որ բոլոր յիշուած հեղինակներուն ընդգրկուեցին մեր ձեռքին տակ, այնպէս որ ստիպուած ենք ֆրանսերէնի վրային բարգմանել այն հաստատուները որոնք յիշուած են հայ վեպերէն: Թորոս ծագիրը անշուշտ մեզի համար նորութիւն մը չի բովանդակեր չարիքի մը մասին որուն գիտար էր ինչ շատ խորհիլ գիտցող ամէն Հայ, բայց շատ է որ այսպէս մերք ընդ մերք մեր հասարակութիւնը իր աչքին առջեւ ունենայ այն դատաստանը գոր օտարները անկեղծօրէն կ'ընեն մեր ապրելու եղանակին վերաբերմամբ:

Ա.

«Դուն մշտական մանուկ մըն եմ, այսպէս վճռած և օրէնքը, ու պէտք է միշտ հսկողութեան տակ մնաս:» Ահա այն յատկանշական խօսքերը գորոնք 1865ին Հայ մեծ բանաստեղծը Շահագրեան իր Լևոնի վիշտը

ընթացածին հերոսին բերանը կը դնէր:

Այդ թուականէն ի վեր, Հայ գրագէտներուն ուշադրութիւնը ամէնէն աւելի դրաւ Հարցերէն մին՝ Հայ կրօնը ազատագրութեան հարցը եղած է: Ու, ապաքէն, կնոջ վիճակը շատ տածանելի է հոն, եւ աւելի լաւ ու բարձր կեանքի մը իրաւունք ունի: Ուստի Հայ մեծ մատենագիրները, ինչպէս Բաֆֆի, Պոռչեանց, Սունդուկեանց, Նար-Դոս, Մուրացան եւ այլն, մէջտեղ դրած են ընտանեկան կեանքը կերպարանափոխելու և ազնուացնելու հարկը, ազատելով զայն ասիական բարբարոսութեան մեացորդներէն:

\* \*

Իրականութեան մեծ մտահոգութեամբ մը, — և առանց կարենալու ըսել թէ կը չափազանցեն —, Հայ գրագէտները կը նկարագրեն նուազ եւ նոյն իսկ անգուժ կացութիւնը որուն մէջ երկար ատեն ապրած է Հայ կինը և որուն մէջ կը գտնուին տակաւին ընկերութեան մէկ քսնի գատակարչերուն կիները: Իսլամական տիրապետութեան երկար տարիները խորին հետքեր թողած են Արեւելքի այդ հին ժողովրդին վրայ: Եթէ իր կրօնը և ընդուն կրցած է պահել, իր սովորութիւնները և ապրելու կերպը թաթար, թիւրք և Պարսիկ ժողովուրդներուն ուժեղ ճնշումը կրած և անոր դրոշմը պահած են: Այդ օտար, և, ըսենք, բարբարոս ազդեցութեանց ներքեւ, կանանց գերին և իրաւունքներուն մէկ լայն ու մարդկային մտածումը չէր կրնար ծլիլ. ու կինը ճգմուեցաւ իր ընտանեկան կեանքին և ընկերութեան մէջ: Հարէմի աւանդութիւնները իսլամներէն անզգալաբար անցան իրենց նուազած քրիստոնեայ ժողովրդին, ու թէև բաց է բաց ու սկզբունքով չընդունուեցան, գործնականին մէջ տիրեցին սակայն, և մեծապէս ծանրացուցին Հայ կնոջ վիճակը իբր դուստր, ամուսին եւ մայր, զանի նկատել տալով իւր ստորին աստիճանի արարած մը որուն պարտականութիւնն է հնազանդիլ ու լռել...

Կիները, երկչոտ, տխուր, հավակերպած իրենց վիճակին, իրենց կամքը յայտնելու ո եւ է իրաւունքէ զուրկ, բնականաբար արդի Հայ մատենագիրներուն ուշադրութիւնը գրաւեցին և շահագրգռութիւնը գերեցին: Հանրածափօթ վիպասան Պերճ Պոռչեանց, որ այնքան հանճարեղ կերպով նկարագրած է Հայ գիւղական կեանքը, իր 1860 և 70 հրատարակուած էն նշան սուր վեպերուն մէջ ներկայացուցած է իր երկրին կիները իբր անգոյն, հլու, անորաունջ էակներ, մինչդեռ նոյն գիւղերուն էրիւմար իրուն՝ ինքնատիպ, կորովի և յանդուգն նկարագիր մը իր գտնէ: Այս իրողութիւնը մեզ զարմացնելու չէ: Պէրպլեան, Պոռչեանցի նուիրած մէկ ցննական ուսումնասիրութեան մէջ, այս մասին կ'ըսէ. «Եթէ Պոռչեանցի սուր հերոսութիւնը անգոյն ու աննշան են, ասոր պատճառը այն չէ թէ հեղինակին վրձինը պակասաւոր էր, հալա սա թէ կեանքը այնքան նեղ շրջանակի մը մէջ կը

սեղմեր կինները որ իրենց անհատականութիւնը բոլորովին կ'անհետանայ: Կինները չեն համարձակիր խօսիլ օտարականին առջեւ, կը վախնան իրենց հօրմէն, ամուսինէն, նոյն իսկ մեծ եղբօրմէն, ու անոնց այրին ոչ չեն ըսեր. Լրիկմարդերուն հետ, միշտ արտուս ու գրեթէ շուտաւ են...»

Բայց եթէ, իրականութիւնը յարգելու համար, Պոստեանց ստուերի մէջ թողած է կանացի նկարագիրները, այսուհանդերձ կանանց ազատագրութեան ամէնէն ազդու ջատագովներէն մին եղած է, եւ իրեն շնորհիւ մէկ քանի իլական վարժարաններ բացուած են:

Վիպասանները յաճախ կը նկարագրեն զիւրացի աղջկան ստրկական վիճակը որով իր ծնողներուն կամքին կը հպատակի կեանքի ամէն պարագաներուն, մինչեւ իսկ ամէնէն ծանր խնդիրներուն—ինչպէս ամուսնոյ մը ընտրութեանը—մէջ, իրաւունք չունենալով բառ մը ըսելու եւ իր բաղդը անօրինելու սրտին համաձայն: Եստ անգամ ալ, նկարագրած են ահաբի հետեւանքները հին սովորութեան մը որ դժբաղդաբար զեռ բողբոլիւն անհետացած չէ,—մանուկներու նշանախօսութիւնը:

Հացի խեղիւր վէպին մէջ, Խէչան ծեր զիւրացին իր երեք տարեկան խնայ սը աղջիկը կը նշանէ իր բարեկամին Սմբատ տղուն:

Տղաքը կը մեծնան, բայց խէնար իր սրտին մէջ ո՛չ հակում եւ ո՛չ սէր կը զգայ իր նշանածին համար. և սակայն, հօրը հնազանդելու համար, պարտաւոր է անօր հետ ամուսնանալ, եթէ ոչ իր ընտանիքին արտա պիտի բերէ: «Ինչպէս զժրագղ չըլլամ, կ'ըսէ բարեկամուհիի մը: Հայրս իս երեք տարեկան հասակիս նշանած է. անիծեալ ըլլայ այդ օրը. ինչո՞ւ եղբայրներուս հետ չը մեռայ: Ինչ անգութ բան է զեռ մօրը ծիծէննոր բաժնուս մը աղջիկ մը նշանել:»

— «Բայց ատիկա ընողը հայրդ է, և իրաւունք ունի բու բաղդը անօրինելու, կը պատասխանէ բարեկամուհին: Ասկից զատ, կրնա՞ս ցոյց տալ մէկ աղջիկ մը որ սիրածին հետ ամուսնացած ըլլայ:»

— «Ճիշդ ատիկա է որ իս կը զայրացնէ. անասուններու պէս մեր ականջին կը քաշեն և ուզածնուն կուտան, առանց ուշ գնելու մեր սրտին...»

Հայ մեծագոյն վիպասաններէն մին, Բաֆֆի, իր Ռախտեալ Միսնճնուհին վիպակին մէջ ձաղկած է ոչ նուազ սոսկալի ուրիշ սովորութիւն մը, որ տակաւին կը տեւէ մէկ քանի յետաձեաց ընտանիքներու մէջ:

Այդ սովորութեան համեմատ, նորածին աղջիկ մը, երբ իր կամ մօրը կեանքը վտանգի մէջ կ'երևնայ, կրօնական կեանքի՝ մշտնջենական կուսութեան կ'ուխտուի: Գիւրաւ կրնաք երեւակայել այդպիսի ուխտի մը հետեւանքները, երբոր, հակառակ ծնողքներուն ձեռք առած բոլոր միջոցներուն, սէրը կը ծնի մանկամարդ աղջկան սրտին մէջ, որ, իր ընտանիքին տէնմար անգթութեանը պատճառաւ, իրաւունք չունի անձնատուր ըլլալու սիրելու երջանկութեան: Ռախտեալին զիւրացունէին, Սօնս,

ծնած ատենն իսկ կուսանոցին կը սահմանուի, հոն թաղուելու է երբ պատանեկութեան օրերուն յաջորդէ երկտասարգութիւնը: Առանց իրեն բառ մը ըսելու իր մասին տրուած որոշման վերաբերմամբ, մանկութենէն առանձին գաստիարակութիւն մը կուտան անոր: Տղայութիւնը կ'անցընէ լուրջ ու խիստ միջավայրի մը մէջ, ծնողներուն անգույ հսկողութեանը ներքեւ: Մինչեւ տասնըչորս տարեկանը զպրոց գացած չէ զեռ, ոչ մէկ ուսուցիչ եկած է իրեն կարգալ սորվեցնելու. առանց մօրը գուրս չէր կրնար ելլել. իրեն արգելուած էր երեւնալ երբսը հիւր մը գտնուէր տունը. բնաւ պտըտելու տարած չէին զինքը. հօրենական տանը մէջ ճշմարիտ բանտարկեալ, բնագոյով կը զգար անագորոյն լուծի մը ծանրութիւնը իր վրայ. միշտ միայնակ, առանց բարեկամուհիի, լուս կը մնար ու կը տառապէր. երբեմն գառն արցունքներ կը շողային իր սե աչքերուն մէջ, իր ծնողներուն զէմ ատելութեան և յանդիմանութեան արցունքներ: Վերջէն, անխուսափելին կը պատահի, մանկամարդ աղջիկը խենդի պէս կը սիրահարի միակ էրիկմարդուն զոր մօտէն տեսած ըլլայ, երիտասարդ ու աղքատ վարժապետ մը զոր ծնողքը վերջի վերջոյ տունը բերած են՝ իրենց աղջկան կարգալ-գրել սորվեցնելու համար: Երիտասարդը ոչ միայն Սօնայի մէջ կ'արթնցնէ ջերմ շահագրգռութիւն մը ուսման համար, այլ եւ, առանց ուզելու, մանկամարդ աղջկան սիրտը կը բանայ նոր զգացման մը, սիրոյ, խա՛րաւ սիրոյ, որուն առ սրկան ինքն է:

Երիտասարդ վարժապետը Սօնայի համար արեւի ճառագայթ մըն է որ յանկարծակի կը լուսաւորէ աղջամուղջը որուն մէջ ապրած էր մինչեւ այն ատեն: Աղջկան ծնողքը կը նշմարեն ասիկա, եւ, կատաղ, կը վրձնեն երիտասարդը, ու առանց վայրկեան մը կորսընցնելու կուսանոց կը տանին Սօնան: Երկար չի մնար հոն, իր առողջութիւնը չի կրնար տանիլ այդ բարեպական առհիւ ցնցումը, եւ, խելքը կորսնցնելէ յետոյ, կը մեռնի:

« Հայ ընտանիքներում,— կ'ըսէ Բաֆֆի՝ այս վիպակին հերոսին բերնովը,— աղջիկը սեպական կամք, ըզգացմունք չունի, նրա բոլոր գոյութիւնը պատկանում է ծնողներին: Կուսանոցը նուիրել իր զուտըը, նրա կամքին ընդդէմ, միևնոյնն է, որպէս նրանք իրենց անասուններին միւր նուիրում են այս կամ այն ուխտատեղին զոհուելու համար:»

Հայոց ամէնէն ժողովրդական բանաստեղծը, Պատկանեան, իր սրտառուչ քերթուածին—Բռնի Ամուսնուրիւն—մէջ, որ 1861ին գրուած է, կը նկարագրէ կսկծելի վիճակը մանկամարդ աղջկան մը որ հակառակ իր կամքին հարուստ ծերունիի մը կնութեան տրուելով, քիչ ետքը կը մեռնի՝ փափուկ ծաղկի մը պէս զոր տմարդօրէն կը տրորեն:

Երսուն եօթը տարի յետոյ, 1897ին, Թէպէտ անկից ի վեր հայկական կեանքը շատ բարեփոխուած ըլլայ, երիտասարդ բանաստեղծը Երասուրեան իր Եատեթից

մինը վիպակին մէջ նմանօրինակ կացութիւն մը կը ներկայացնէ աւաղելով.— մանկամարդ աղջիկ մը, անաբատ, գեղեցիկ, զուրկ միայն դիմադրելու կորուլէն սր հարկաւոր է կեանքի ինչ ինչ պարագաներուն մէջ, կնութեան կը տրուի ծերունիի մը զոր կ'ատէ:

Քիչ մը վերը յիշեցինք Պատկանեանը որ այնքան ժողովրդական է իբր բանաստեղծ. աւելցնենք որ զրած է նաև մէկ քանի վէպիկներ որոնք շատ հետաքրքրական են բարբերու տեսակետով: Այդ վէպիկներուն մէկուն, Վարդիօրի, մէջ, ուժղին գծերով կը նկարէ հայ ընկերութեան ինչ ինչ դասակարգերուն մէջ գործածուած թակարգները՝ կարգելու համար իրենց աղջիկը զոր կ'ուզեն ժամ առաջ իրենց պլէն նետել, մանաւանդ երբ աղուոր չէ: Վէպին հերոսը, երիտասարդ վաճառական մը, պտոյտի մը ատեն երկու մանկամարդ աղջիկ կը տեսնէ. մին, իր գեղեցկութեամբը, մեծ տպաւորութիւն կը թողուի վրայ. ընկերուհին, ընդհակառակը, տգեղ ու պառւած է. այս վերջինին հայրը անպատկառօրէն կը խաբէ երիտասարդը: Չինքը հմայած գեղուհիին ընտանիքը ծանշանալու համար, երիտասարդը զանազան անձերու կը դիմէ, ի միջի այլոց տգեղ ու խռփած աղջկան հօրը, որ զանի տունը կը հրաւիրէ՝ ըսելով թէ ճշդիւ ինքն է այն աղուոր աղջկան հայրը: Անոր կը խմցնէ մինչեւ որ ա'լ խելքը կը կորսնցնէ, եւ, այդ վիճակին մէջ, իր աղջկանը կը նշանէ զանի: Պատկանեան, ասոր վրայ հիմնուելով, ազգուօրէն կը պախարակէ այդ ըմբոստեցնող նախապաշարուածները որոնց շնորհիւ երիտասարդները չեն կրնար իրար տեսնել ու իրարու հետ խօսիլ մինչեւ նշանախօսութեան օրը, — ու ատով է որ կրնանք բացատրել վերոյիշեալ կոշտ խաբէութիւնը:

Սունդուկեանց թատրերգակը իր խաբարաչային մէջ կը պարսաւէ նոյն վայրենի սովորութիւնը: Թատրերգութեան հերոսը նոյն եղանակով խաբելու վրայ են, կ'ուզեն զինքը կարգել աղջկան մը հետ զոր երբեք անսած չէ, իրեն հատարեցնելով թէ այն աղջիկն է ատիկա որուն օր մը փողոցը հանդիպած է եւ որ մեծ տպաւորութիւն թողուցած է իր վրայ: Նշանախօսութեան օրը կուգայ, և երբ, հրաւիրեալներուն ներկայութեանը, երիտասարդը առաջին անգամ ըլլալով առանց քօղի կը տեսնէ մանկամարդ աղջիկը զոր իրեն կնութեան պիտի տան, կը հասկնայ խաբէութիւնը եւ կը մերժէ նշանուիլ. հօրը և բոլոր ազգականներուն ո'չ աղաչանքը, ո'չ սպառնալիքը կրնան ողոքել զինքը: Պերճախօս և զայրացկատ շեշտերով, հեղինակը խստիւ կը դարովէ այդ սովորութիւնը, որ նախնի բարբարոսութեան մնացորդ մըն է:

ԺԻԻԼԻԱ ՎԼԱՏԱ

(Մնացեալը յաջորդով)

ԹԻԻՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

Երուպայի մէջ տակաւին չհանգարտած այն յուշումը զոր յառաջ բերաւ ուսական Չ ու կէս միլիոն ոսկիի փոխատուութիւնը պարսկական գանձին, ահա նոր տեղեկութիւններ կը հասնին այն ուրիշ յաջողութեանց մասին զոր Ռուսիա ձեռք բերելու վրայ է Շահին երկրին մէջ:

Օտևայէն կը գրեն Թայվդի թէ այս միջոցին ուսական բանակը մեծ գործունէութիւն ցոյց կուտայ Կովկասի մէջ: Կ'ըսուի թէ զօրքերու մեծ համախմբում մը տեղի կ'ունենայ պարսկական եւ աֆղանեան սահմանադրականներուն երկայնքը: — Բայց մէկի թողուլ այդ զրոյցները, զանք իրողութիւններուն: Թուրքիստանի ուսական պաշտօնական լրագիրը կը տեղեկանայ թէ ուս կառավարութիւնը արդէն ձեռք առած է Զուղա-Դաւրէթ-Համատանէն մինչեւ Պէնտէր-Ապասի (Օմանի ծովուն վրայ) երկաթուղիի մը շինութիւնը, որ ճիշդ մը պիտի ունենայ դէպի Թէհրան: Զեռնարկութիւնը առաջ պիտի մղուի ուսական սպայակոյտին պատկանող սպաներու հսկողութեան ներքեւ, որոնք խազախներ պիտի ունենան հետերին, եւ կը յուսացուի որ շինութիւնը աւարտի 1903ին: Այս ճամբան ընտրուած է, որովհետեւ Ռուսիոյ համար անտեսական եւ ռազմագիտական տեսակետով ամէնէն կարեւոր գաւառներէն կ'անցնի:

Նոյն լրագիրը մատնանիչ կ'ընէ թէ Ռուսիոյ նպատակակետը Պարսկաստանի եւ Փլքը-Ասիոյ մէջ՝ դէպի հարաւ ծովու վրայ կողան մը ունենալ է, որպէս զի կարենայ իշխել Հնդկաստան եւ Եւրոպայոյն-Արեւելք տանող տիեզերական առևտրական մեծ ճամբուն: Միևնոյն ատեն, Ռուսիա խնամքով ետ պիտի կենայ ամէն բանէ որ կրնայ թիւրքիոյ դիրքը զօրացնել: Հետևաբար՝ երկաթուղիով ո և է հողորդակցութիւն պիտի չհաստատուի Տիբրիսի կամ Եփրատի հովտին, կամ Պուշրի հետ, հպա միայն Պէնտէր-Ապասի եւ Պարսկաստանի քաղաքական, անտեսական և ռազմագիտական կեդրոններուն հետ:

Միւս կողմէ, Ռուսիա մեծ ճարտարութեամբ Երուպայի հանրային կարծիքը պատրաստելու վրայ է Պարսկաստանի մէջ յառաջ դալիք ո և է պատահականութեան: Այսպէս, Պերլինի թակեպալային Բելլոպոլի թղթակիցը «վերահասու եղած է» տեղեկագրի մը զոր պարսիկ բանակին մէջ իբր կրթիչ ծառայող ուս սպայ մը Թէհրանէն զրկեր է վերջերս Ռուսիոյ պատերազմական գործերունախարարին: Սպան կը տեղեկադրէ նախարարին թէ «ամբողջ Պարսկաստանի մէջ սաստիկ տձգուցութիւն կը տիրէ արդի կառավարութեան դէմ: Անբերակայիլի զօջաքաղութիւն կը տիրէ բոլոր պաշտօնեաներուն մէջ: Թոշակները չեն վճարուիր, և Շահը իսկ զրամական այնքան նեղութեան մէջ կը գտնուի որ վերջերս հարուստ Պարսիկ մը բանազատեց 60,000 բուպլի փոխ տալու իրեն:

Ժողովուրդը անդադար կը գոչէ. «Ե՛րբ պիտի գան Ռուսերը: Ե՛րբ Ճերմակ Չարը պիտի ազատէ մեզի:» Ռուսական կեդրոնական Ասիա և Կովկաս բնակող Պարսիկները իրենց հայրենակիցներուն կը տեղեկացնեն ուս կառավարութեան արդարութիւնը. եւ, իրօք, երկու խազան զօրագունդ պիտի բաւէր ամբողջ Պարսկաստանը կառավարելու համար:»

Թակեպուրի թղթակցին քաղած այս տեղեկութիւնները եւրոպական մամուլին շրջանը ըրին, եւ, բացի անգլիական թերթերէն, ոչ ոք կ'ուրանայ թէ Պարսկաստան այսօր եթէ ոչ գործնականապէս գոնէ բարոյապէս ուսական նահանգի մը վերածուելու պատահականութեան առջեւ կը գտնուի:

\* \* \*

Պարսկաստանէն յետոյ, Ռուսիա թիւրքիոյ մէջ նոր յաջողութիւններ ձեռք բերելու վրայ է: Ֆրանքֆուրթըր Չայքունկ կը տեղեկանայ թէ կ. Պոլսոյ ուսական ղեկապանը մէկ քանի օր առաջ սուլթանէն իրատէ մը ստացեր է՝ կարսէն Էրզրում երկաթուղի մը շինելու համար, որ սահմանադրի կայարանէն՝ Սարըգամըշէն՝ պիտի յառաջանայ Գարա Վուրդուն, Արաքսի հովտին մէջէն: Թիւրքիոյ և Ռուսիոյ միջեւ այս մասին կնքուած պայմանագրութիւնը յարեման է անոր որ Գերմանիոյ հետ կնքուեցաւ Պաղատաի երկաթուղիին համար: Պայմանագրութեան մէկ յօդուածը որոշակի կը տրամադրէ թէ Ռուսիա իրաւունքի նմանօրինակ նախընտրութիւն պիտի ունենայ բոլոր այն միւս ճիւղերուն համար որոնք ապագային պիտի կրնան շինուիլ զէպի ուսական սահմանադրուիլը:

Այս լուրը, որուն կարեւորութիւնը ոչ մէկուն ուշադրութենէն պիտի վրիպի, ղեկ շատ նոր է ու լիովին ըստուգուած չէ, եւ անգլիական մամուլը կ'արձանագրէ զայն առանց մեկնութեան, ճիշդ ինչպէս ըրաւ պարսկական փոխտուութեան եւ երկաթուղիներու մասին: Ըսել չէ թէ Անգլիոյ հանրային կարծիքը, որչափ ալ այլուր զբաղած ըլլայ այլամերձօրէն, մտահոգութեամբ չի հետեւիր իր մրցակիցներուն ձեռք բերած յաջողութեանցը: Երէկ (փետրուար 14) Անգլիոյ խորհրդարանին մէջ հարցում մը ուղղուեցաւ այս մասին, ու արտաքին գործերու խորհրդականը պատասխանեց թէ «Անգլիական կառավարութիւնը տեղեկութիւն չունի թէ սուլթանը արտօնութիւն տուած ըլլայ գերմանական երկաթուղիի մը մինչեւ Պարսի նաւահանգիստը, Պարսից ծոցին մէջ, եւ թէ ուսական երկաթուղիները պիտի յառաջանան Ասիոյ մէջ: Եթէ և երբոր անգլիական շահերը վտանգուին, Անգլիոյ կառավարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէ զանոնց պահպանելու:»

Անշուշտ Անգլիա պիտի ետ չմնայ իր բողոքի ձայնը բարձրացնելէ այն պարագային ուր Ռուսիա իր ձեռք բերած ղեկանագիտական յաջողութիւնները՝ շօշափելի իրականութեանց վերածել ուզէ: Բայց ամէն ոք կ'ընդունի թէ Անգլիա ղեկ երկար ատեն չարաչար զբաղած

պիտի ըլլայ Հարաւային Ափրիկէ, ու իր բողոքները իր մրցակիցներուն դէմ պղատոնական ձայնարկութիւններէ անդին պիտի չանցնին:

\* \* \*

Կովկասի հայ գաղթականներուն վիճակը մշտնջենաւ. կան հարցի մը կերպարանքը առած է:

Փետրուար 13ին կ. Պոլսէն կը հեռագրեն թէ ուսական ղեկապանտունը ձանուցադիր մը ուղղած է Բ. Դրան, նորէն գանգատելով սահմանադրի օսմանեան իշխանութեանց դէմ որոնք կը մերձեն ընդունիլ թիւրքիա վերագարձող Հայերը որոնց անցադրերը ըստ օրինի վաւերացուած են սակայն թիւրք հիւպատոսներէն: Ռուսական ղեկապանտունը ուշադրութիւն կը հրատարակէ սա իրողութեան վրայ նաև թէ Հայեր կը շարունակեն թիւրքիայէն ուսական հողը գաղթել՝ իրենց կրած հարստահարութեանց պատճառաւ: Եւրակացնելով, ձանուցագիրը կը խնդրէ որ վերջ մը տրուի արդի կացութեան:

\* \* \*

Սուլթանը վազ անցած է դատէն զոր պիտի բանար Օսոսի երեք խմբագիրներուն, Խուպէն Կօիէի, Բիւն Գիլ-Եարի և Շարլ Մալադոյի դէմ: Ելլալը յաղուէսը հասկըցած է դժբախտաբար թէ այդ դատը Եւրոպայի առջեւ անգամ մը եւս պիտի պարզէր իր իշխանութեան բոլոր սնիրները, եւ խոհեմութիւն համարած է ետ առնելու իր բողոքը: Բարոյական յաղթանակ մըն է առ այն երեք արի գործներուն համար որոնք այսօր հայկական դատով զբաղող գրեթէ միակ անձերն են Ֆրանսայի մէջ:

ՀԱՍՑԵ ՈՒ ԲԱԺՆԵՂԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿ ՈՒ ԲԱԺՆԵՂԻՆ ՂԵԿԵԼ ԱՌ

L. FRANK,  
32, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգրինն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

Մեր գործակալներուն կողմէ մեզի նշանակուած այն բաժանորդները որոնք մտադիր չեն իրենց բաժանորդագրութիւնը շարունակելու, պէտք է ետ դարձնեն մեզի ներկայ տարուան առաջին երկու թիւերը որոնք իրենց զրկուած են: Իսկ եթէ շարունակեն թերթերը ստանալ անձայն, մեր գործակալները իրաւունք պիտի ունենան իբր բաժանորդ նկատելու զիրենց և ըստ այնմ բաժնեգրինը պահանջելու իրենցմէ: